ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Լրամշակված տարբերակ

Կ-664-18.06.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՀԱՅՍԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 2-րդ կետում «գնահատել» բառից հետո լրացնել «կամ վերագնահատել» բառերը:
2. 6-րդ կետում «հայտնաբերման» բառից հետո լրացնել «,հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման» բառերով:
3. 25-**րդ կետում** «միջոցառումներ» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներին համապատասխան»:
4. լրացնել նոր 51-րդ և 52-րդ կետեր.

«51) հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամաս՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում հաշվառված հանքավայրի տարանջատ տեղամաս, որը հաշվառված է առանձին անվանմամբ և սահմանանշերով:

52) գետաողողատային տիպի հանքավայր՝ գետերի ողողատային տարածք, որը պարունակում է գետի վարարումների արդյունքում կուտակված ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) վերականգնվող պաշարներ, որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական:»:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածում՝

1. 6-րդ մասում «կարգով» բառից հետո լրացնել «և ժամկետում» բառը
2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-6.10 մասերով.

«6.1. Ընդերքաբանական փորձաքննությունն իրականացվում է լիազոր մարմնի կողմից:

6.2. Օգտակար հանածոների պաշարների գնահատմանը վերաբերող նյութերի ընդերքաբանական փորձաքննությանը լիազոր մարմնի կողմից կարող են ներգրավվել փորձագետներ:

6.3. Եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերը չեն համապատասխանում ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը, ապա լիազոր մարմինը նյութերը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործողին՝ նշելով թերությունները: Ընդերքօգտագործողը ծանուցումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինը այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

6.4. Եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերը չեն համապատասխանում **օգտակար հանածոների պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգմանը** կամ օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և մեթոդական ցուցումների պահանջներին կամ պաշարների գնահատման հաշվարկներում առկա են բացթողումներ, ապա լիազոր մարմինը դիտարկված բացթողումների վերաբերյալ տեղեկացնում է դիմումատուին՝ նյութերի լրամշակման նպատակով՝ սահմանելով լրամշակման համար հետևյալ ժամկետային սահմանափակումները՝

1) ոչ մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 30 օր,

2) մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 120 օր:

Եթե նշված բացթողումները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինը այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

6.5. Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող լրակազմ նյութերը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացում լիազոր մարմինը գրավոր դիմում է բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատման, ինչպես նաև դրանց արժանահավատության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

6.6. Բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացում լիազոր մարմնին տրամադրում է սույն հոդվածի 6.5 մասով նախատեսված և իր տնօրինման տակ գտնվող առկա տեղեկատվությունը: Տեղեկատվության բացակայության դեպքում 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով սկսում է ստուգման գործընթացը և լիազոր մարմնին տեղեկացնում տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ:

6.7. Եթե բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիազոր մարմնին տրամադրված տեղեկատվության համաձայն ընդերքօգտագործողի կողմից կատարված և հաշվետվությամբ ներկայացված աշխատանքների առաջնային երկրաբանական փաստագրման նյութերը արժանահավատ չեն և չեն համապատասխանում փաստացի իրականացված աշխատանքների հետ, ապա լիազոր մարմինը այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

6.8. Փորձաքննության գործընթացը կասեցվում է մինչև դիմումատուի կողմից լիազոր մարմին նյութերի լրամշակված տարբերակի ներկայացումը և (կամ) մինչև բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիազոր մարմնին տրամադրած տեղեկատվության ստացման օրը:

6.9. Ընդերքաբանական փորձաքննության արդյունքում տրվում է փորձագիտական եզրակացություն, որը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի համապատասխան որոշմամբ:

6.10. Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանում է լիազոր մարմինը:»:

3. 7- 10-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 9-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասից հանել «մետաղական» բառը:
2. 6-րդ մասում «պարտավորությունից» բառից հետո լրացնել «՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված և ընդերքօգտագործման իրավունքից բխող մյուս բոլոր պարտավորությունները ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու պարտականությունը» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «տեղեկությունը» բառից հետո ավելացնել «ընդերքօգտագործման իրավունքի ժամկետում» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25-28-րդ կետերով.

«25) գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգի սահմանումը.

26) ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի սահմանումը.

27) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցերի հաստատումը.

28) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգի սահմանումը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված հատուկ նշանակության սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման համար հողամասի նպատակային նշանակության փոփոխություն և հողամասի հատկացում չի պահանջվում: Վերականգնվող պաշարների արդյունահանում կարող է իրականացվել միայն սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 17-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը լրացնել նոր 24-րդ և 25-րդ կետերով.

«24) երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջների սահմանումը:

25) օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և մեթոդական ցուցումների սահմանումը:»

2. 2-րդ մասի 3-րդ կետում «իրականացումը» բառից հետո լրացնել «փորձաքննական եզրակացությունը հաստատվում է լիազոր մարմնի համապատասխան վարչական ակտով» բառերով:

3. 2-րդ մասում՝

1) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, վերահաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացնման, դրամագլխից գումարի վերադարձման վերաբերյալ որոշումների ընդունումը.»,

2) 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14) ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի մշակումը.»,

3) լրացնել հետևյալ բովանդակությանբ 14.1-14.4-րդ կետերով.

«14.1) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործ-ման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցերի մշակումը.

14.2) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգի մշակումը.

14.3) ընդերքօգտագործման իրավունքի դադարելու դեպքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի նախատեսված ողջ ծավալով հատկացումներ չկատարելու դեպքերում դատական կարգով հայցադիմումի ներկայացումը.

14.4) ընդերքօգտագործման իրավունքի դադարելու դեպքում օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար ողջ ծավալով հատկացումներ չկատարելու դեպքերում դատական կարգով հայցադիմումի ներկայացումը»:

Հոդված 8.Օրենսգիրք 27-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետում «կարգի» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1.1 կետի» բառերով.

2. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ 25 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ 25 տարի ժամկետով: Մինչև 25 տարի ժամկետով թույլտվություն կարող է տրամադրվել կամ տրամադրված թույտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները:»:

3. լրացնել հետևյալ բովանդակությանբ 1.1-րդ և 3-րդ կետերով.

«1.1) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության՝ հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար մինչև 3 տարի ժամկետով, եթե հանքավայրի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10 և ավելի տարի առաջ և կարող է երկարաձգվել միայն սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.3-րդ մասով սահմանված դեպքում.

3) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ 20 ժամկետով տարի, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ 20 տարի ժամկետով: Մինչև 20 տարի ժամկետով թույտվություն կարող է տրամադրվել կամ տրամադրված թույտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները:»:

Հոդված 9. Օրենսգրքի 28-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «առարկա» բառից հետո լրացնել «եթե դրանով ապահովվում են նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրից բխող պարտավորությունները, եթե այդպիսի նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրի շրջանակներում փոխատուի (վարկատուի) կողմից դրամը (միջոցները) հանձնվում են ընդերքօգտագործող փոխառուի (վարկառուի) սեփականությանը ընդերքօգտագործման թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով նախատեսված աշխատանքների և դրանցով ստանձնած պարտավորությունների կատարման համար օգտագործելու նպատակով» բառերը:

2. լրացնել հետևյալ բովանդակությանբ 1.1-1.3-րդ մասերով.

«1.1. Ընդերքօգտագործողը լիազոր մարմին է ներկայացնում ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համար համաձայնություն տալու մասին դիմում: Դիմումում և դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը.

2) իրական սեփականատերերի վերաբերյալ քաղվածքը՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի կամ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակավ երկրաբանական ուսումնասիրության իրավունքի կամ երկաբանական համաձայնության դեպքում.

3) հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

4) ընդերքօգտագործման իրավունքի գրավի նախնական պայմանագիրը և նպատակային փոխառության (նպատակային վարկային) նախնական պայմանագիրը, որից բխող ընդերքօգտագործողի պարտավորությունների ապահովմանն է ուղղված ընդերքօգտագործման իրավունքի գրավը: Նշված նախնական պայմանագրերում պետք է արտացոլված լինեն այն աշխատանքները և պարտավորությունները, որոնց կատարման համար օգտագործելու նպատակով պետք է տրամադրվի նպատակային փոխառությունը (նպատակային վարկը):

1.2. Դիմումին կցվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենով:

1.3. Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին:

3. 2-րդ մասի «լիազոր մարմնին գրավոր տեղեկացնելուց» բառերը փոխարինել «լիազոր մարմնի հաձայնությունը ստանալուց» բառերով, իսկ առաջին նախադասությունից հետո լրացնել «Սույն Օրենսգրքի 28-րդ հոդված 1-ին մասով սահմանված պայմանագրերում արգելվում է փոփոխություններ կատարել առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցման:» նախադասությունը.

4. լրացնել հետևյալ բովանդակությանբ 2.1-րդ մասով.

«2.1 առանց լիազոր մարմնի համաձայնության կնքված կամ փոփոխված ընդերքօգտագործողի և գրավառուի միջև գրավի պայմանագիրը՝ առոչինչ է:».

5. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Լիազոր մարմնի համաձայնության հիման վրա ընդերքօգտագործման իրավունքը սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գրավադրած ընդերքօգտագործողը պարտավորվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը լիազոր մարմնին ներկայացնել տարեկան հաշվետվություն, որն իր մեջ պետք է ներառի՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը.

2) մանրամասն տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործման թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով նախատեսված աշխատանքների և դրանցով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ, որոնց կատարման նպատակով ներգրավվել է նպատակային փոխառությունը (նպատակային վարկը) և որից բխող պարտավորությունների ապահովման նպատակով գրավադրվել է ընդերքօգտագործման իրավունքը,

3) սույն հոդվածի 1-ին մասով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված և կատարված ծախսերը հավաստող փաստաթղթեր.

4) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող ընդերքօգտագործողների դեպքում՝ հաշվետվությամբ ներկայացված ծախսերն այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ համադրող՝ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով աուդիտորական կազմակերպություն համարվող ընկերության կողմից պատրաստված հաշվետվություն, որը պետք է հնարավորություն տա նույնականացնել յուրաքանչյուր ծախսային տարրն այն հիմնավորող փաստաթղթի հետ:»

6. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Տարեկան հաշվետվությանը կցվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենով:

5. Ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համար համաձայնություն տալու մասին դիմումը մերժվում է, եթե՝

1) դիմումատուն ունի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ.

2) սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված պայմանները չբավարարելու դեպքում»:

Հոդված 10. Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

1. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման կամ կասեցման վերաբերյալ կայացված վարչական ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում:»:

2. 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-8-րդ կետերով.

«6) սույն օրենքի 28-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով կնքված ընդերքօգտագործման իրավունքի գրավով ապահովված նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրի շրջանակներում ընդերքօգտագործողին հանձնված դրամը ծախսվել է ոչ նպատակային կամ ընդերքօգտագործողը չի ներկայացրել սույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարեկան հաշվետվությունը.

7) սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 25-րդ կետի պահանջով իրականացվող մշտադիտարկումների արդյունքում գետի հունի վիճակի և կայունության փոփոխություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ չի դադարեցվել հանքավայրի շահագործման աշխատանքները.

8) բնապահպանության և ընդերքի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից ստուգմամբ արձանագրված իրավախախտման վերացման համար տրված հանձնարարականի չկատարման վերաբերյալ ակտը ուժի մեջ է մտել և ներկայացվել է ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին միջնորդագիր:»:

Հոդված 11. Օրենսգրքի 33-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով.
2. 2-րդ մասի 5-րդ կետում «2-րդ մասին» բառերից հետո լրացնել « և լիազոր մարմնի կողմից սահմանված ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին » բառերով:

Հոդված 12. Օրենսգրքի 38-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերը.
2. 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը՝ սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասին և լիազոր մարմնի կողմից սահմանված ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան:»:

Հոդված 13. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10) ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված օբյեկտ է և իրավունքի դադարեցման

մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով և առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:»:

Հոդված 14. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ **բովանդակությամբ** 10-րդ կետով.

«10) **ընդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխի հատկացումների և դրանց վճարման ժամանակացույցի մասին տվյալները:»:

Հոդված 15. Օրենսգրքի 42-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասում «խախտմամբ» բառից հետո ավելացնել «կամ ընդերքօգտագործողը չի կատարել երկրաբանական ուսումնասիրության ծրագրով՝ թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի պահին նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսը, ինչպես նաև չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման պահի դրությամբ նախատեսված ծավալով հատկացումները» բառերը».

2. 5-րդ մասում՝

1) «նշվեն» բառից հետո լրացնել «և ներկայացվեն թղթային և էլեկտրոնային տարբերակով» բառերը

2) 3-րդ կետից հանել «կամ նախագծով» բառերը:

3. լրացնել հետևյալ բովանդակությանբ 2.2-րդ և 2.3-րդ մասերով.

«2.2 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը տրամադրվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար՝ 3 տարի ժամկետով և առանց երկարաձգման հնարավորության՝ բացառությամբ սույն հոդվածի 2.3 մասի, եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության թույլտվության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10 և ավելի տարի առաջ:

2.3 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման թույլտվության գործողության ժամկետը օգտակար հանածոյի հանքավայրի պաշարների վերագնահատման հաշվետվության հաստատումից հետո՝ 20 օրվա ընթացքում, ուսումնասիրության թույլտվություն կրողի ներկայացրած դիմումի հիման վրա կարող է երկարաձգվել ևս մեկ տարով՝ արդյունահանման նախագիծը կազմելու համար:»

Հոդված 16. Օրենսգրքի 43-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «ծրագիրը» բառից հետո լրացնել «թղթային և էլեկտրոնային տարբերակով» բառերը.

2. լրացնել 4.1 մասով.

«4.1 Լիազոր մարմինը մերժում է ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ ներկայացված դիմումը, եթե ընդերքօգտագործողը չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման օրվա դրությամբ նախատեսված հատկացումները:».

3. 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 18. Օրենսգրքի 45-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի «3» թիվը փոխարինել «վեց» բառով.

2. 2-րդ մասում «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով,

3. 3-րդ մասում՝

1) «Դիմումին կցվում են» բառերից հետո լրացնել «նաև» բառը,

2) 2-րդ կետում «ծրագիրը» բառից հետո լրացնել «և կից փաստաթղթերը» բառերը,

4. 5-րդ մասում՝

1) 1-ին կետում «2-րդ մասի 3-րդ կետով» բառերը փոխարինել «2-րդ և 3-րդ մասերով» բառերով.

2) 2-րդ կետում « շահագործվել որպես ողջամիտ և համալիր» բառերը փոխարինել «չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին նախատեսված ողջ ծավալով հատկացումները:**».**

5. 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) եթե հավաստագիրը վերաբերում է երկրաբանական ուսումնասիրության թույլտվության օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-4-րդ և 6-7-րդ մասերը և 41-րդ հոդվածը:»:

Հոդված 19. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության 9-րդ կետով.

«9) պաշարների վերագնահատման հաշվետվությունը ներկայացնել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի ավարտից ոչ ուշ քան 9 ամիս առաջ.»:

Հոդված 20. Օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «մինչև 30-օրյա » բառերը փոխարինել «մինչև 30 աշխատանքային օրյա» բառերով:

Հոդված 21. Օրենսգրքի 49-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) կարող է դիմել լիազոր մարմին՝ օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով այն հանքավայրի կամ_հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքում հաստատվել են օգտակար հանածոյի պաշարներ: Օգտակար հանածոյի պաշարների հաստատման ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, որի դրությամբ կազմվել է ընդերքաբանական փորձաքննության ներկայացված և հաստատված պաշարների հաշվետվությունը:».

2. 2-րդ մասում՝

1) «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերը.

2) 5-րդ կետում «1-ին մասին» բառերից հետո լրացնել «լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին» բառերով.

3. 2-րդ մասը լրացնել նոր 12-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«12) սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի

վերականգնվող պաշարների արդյունահանման դեպքում սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը»:

Հոդված 22. Օրենսգրքի 50-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը լրացնել նոր 1.1-րդ, 1.2-րդ և 1.3-րդ կետերով.

«1.1) հանքավայրի պաշարների գնահատման համար հիմք հանդիսացած օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման տեխնիկատնտեսական և տեխնոլոգիական հիմնարար ցուցանիշները և նախագծի համապատասխանությունը այդ ցուցանիշներին.

1.2) պինդ օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների ներառումը: Եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները գերազանցում են հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը (ոչ մետաղականի դեպքում՝ 20-ապատիկը), ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա (ոչ մետաղականի դեպքում՝ 20-ամյա) արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը ,

1.3) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝

ա. տարեկան մինչև 500 հազար տոննա արտադրողականության պարագայում միայն պինդ պոչանքների առաջացմամբ տեխնոլոգիայի պարտադիր կիրառումը.

բ. ջրի փակ շրջանառու համակարգի պարտադիր կիրառումը,

գ. պոչամբար նախատեսված լինելու դեպքում՝ պոչամբարի տեղադիրքը, քարտեզագրական նյութերը և կառուցման եղանակի հակիրճ նկարագրությունը բացառելով վերընթաց եղանակով պոչամբարի կառուցումը,»:

2. 1-ին մասի 3-րդ կետում «հաշվարկը,» բառից հետո լրացնել «տարեկան առավելագույն արտադրողականությունը:» բառերը:

Հոդված 23. Օրենսգրքի 51-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 40-օրյա ժամկետում, լիազոր մարմինը, հանքի փակման ծրագիրը, ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը՝ կից փաստաթղթերով ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:»:

2. 11-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10) ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցված օբյեկտ է և տվյալ իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով և առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:»:

Հոդված 24. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8) դրույթներ՝ ընդերքն օգտագործելիս կատարվող վճարների հաշվարկման և վճարումների վերաբերյալ, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման հատկացումների վճարումների ժամանակացույցի վերաբերյալ.»:

Հոդված 25. Օրենսգրքի 55-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը տրվում է սույն օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված ժամկետներով:»,

2. 2-րդ մասում «վեց ամիս» բառերը փոխարինել «երկու տարի» բառերով, իսկ «՝ ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ» բառերը հանել.

3. 3-րդ մասում՝

1) «Դիմումում նշվում են՝» բառերը փոխարինել «Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)՝» բառերով.

2) 5-րդ կետում «նախագիծը,» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի և լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան» բառերով,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանները, հանքի փակման փոփոխված ծրագիրը.»

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.2 մասով՝

«5.2. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետը չի երկարաձգվում, եթե ընդերքօգտագործողը՝

1) ընդերքօգտագործման իրավունքի տրման օրվանից մինչև ժամկետի երկարաձգման դիմումի ներկայացման ժամանակահատվածում չի արդյունահանել թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 տոկոսը.

2) չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման օրվա դրությամբ նախատեսված հատկացումները.

3) չի կատարել դիմումի ներկայացման օրվա դրությամբ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ծավալով հատկացումները»:

Հոդված 26. Օրենսգրքի 56-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում՝

1) «ներկայացվում են» բառերից հետո լրացնել « (թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով,

2) 2-րդ կետում «նախագիծը» բառից հետո լրացնել « սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին և լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան» բառերով,

3) լրացնել 5-րդ կետով.

«5) ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանները, հանքի փակման փոփոխված ծրագիրը.».

2. լրացնել հետևյալ բովանդակությանբ 5.1-րդ մասով.

«5.1 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասը չի կարող ընդլայնվել, եթե՝

1) ընդերքօգտագործման իրավունքի տրման օրվանից մինչև տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ դիմումի ներկայացման ժամանակահատվածում ընդերքօգտագործողը չի արդյունահանել թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 տոկոսը.

2) չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման օրվա դրությամբ նախատեսված ծավալով հատկացումները.

3) չի կատարել դիմումի ներկայացման օրվա դրությամբ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ծավալով հատկացումները:»:

Հոդված 27. Օրենսգրքի 58-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում՝ «3» թիվը փոխարինել «9»թվով.
2. 2-րդ մասում՝

1) «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով

2) 5-րդ կետում «նշված» բառից առաջ լրացնել «սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ կետի «բ.» ենթակետով» բառերը.

3. 3-րդ մասում «հրաժարվելու» բառից հետո լրացնել «դեպքում ընդերքի տեղամասից հրաժարման» բառերով, «կցվում է» բառերը փոխարինել «կցվում են նաև» բառերով, իսկ «նախագիծը» բառից հետո լրացնել «՝ սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին և լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան և 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-11-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը» բառերով.
4. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 մասով.

«3.1 Ընդերքի տեղամասից հրաժարման նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 20-օրյա ժամկետում, լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված հանքի փակման ծրագիրը կամ փոփոխված նախագիծը և ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-7-րդ և 9-րդ մասերով սահմանված կանոնները:».

5. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4.Փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը մինչև 25-օրյա ժամկետում որոշում է ընդունում հրաժարման նախնական հավաստագիր տրամադրելու վերաբերյալ, որը ներառում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից հրաժարման պայմաններ, փորձաքննության եզրակացության պահանջներ և դրանց իրականացման հավասիտության ապահովման պայմանները:».

6. 5-րդ մասի՝

1) «հրաժարման» բառից հետո լրացնել « նախնական » բառը,

2) 1-ին մասում «2-րդ մասով» բառերը փոխարինել « 2-րդ և 3-րդ մասերով» բառերով,

3) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) Եթե ընդերքօգտագործողը չի կատարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի նախատեսված ողջ հատկացումները.»,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 և 4-րդ կետերով.

«2.1) ընդերքօգտագործողը չի կատարել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ողջ ծավալով հատկացումները.

4) փոփոխված նախագծի կամ հանքի փակման ծրագրի վերաբերյալ տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն.»,

ե. 3-րդ կետից հանել երկրորդ նախադասությունը .

7. 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ընդերքօգտագործողի կողմից սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հրաժարման նախնական հավաստագրով սահմանված պայմանների և պահանջների իրականացումը հավաստող փաստաթղթերը լիազոր մարմնին ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում լիազոր մարմինը որոշում է կայացնում հրաժարման հավաստագիր տրամադրելու վերաբերյալ և եռօրյա ժամկետում պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործողին: Հրաժարման հավաստագիրը ուժի մեջ է մտնում լիազոր մարմնի կողմից որոշում ընդունելու օրվան հաջորդող տասներորդ օրը :»:

8. 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«7. Եթե հավաստագիրը վերաբերում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված որոշման ընդունումից հետո 10-օրյա ժամկետում այդ մասին ծանուցվում է դիմումատուին: Լիազոր մարմնից ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, դիմումատուն ներկայանում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի համապատասխան վերաձևակերպումները իր կողմից վավերացնելու համար, որից հետո՝ 10-օրյա ժամկետում, տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը:Նշված ժամկետում դիմումատուի չներկայանալու դեպքում հրաժարման հավաստագիրը համարվում է ուժը կորցրած:»

9. 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Եթե հավաստագիրը վերաբերում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքին ամբողջությամբ, ապա սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված որոշման ընդունումից հետո լիազոր մարմինն ընդունում է նաև իրավունքի դադարեցման մասին որոշում և այդ մասին 10-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:»:

Հոդված 28. Օրենսգիրքը լրացնել 58.1 հոդվածով.

«Հոդված 58.1. Հանքի փակման ծրագրի ներկայացումը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից երկու տարի առաջ, դիմում է լիազոր մարմին հանքի փակման ծրագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություններ իրականացնելու համար:

2. Դիմումին կից ներկայացվում են (թղթային և էլեկտրոնային տարբերակով)՝

1) հանքի փակման ծրագիրը, որում ներառվում են՝

ա. ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիրը, ներառյալ՝ հանքի գոյության ընթացքում կատարած ռեկուլտիվացման աշխատանքները,

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը, որը ներառում է հանքի փակումից հետո աշխատատեղերի ստեղծման, մասնագիտական վերարակավորման և ուսուցման դրույթներ,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը.

2) հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.

3) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ.» ենթակետով նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթերը.

4) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

3. Հանքի փակման ծրագրի ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-7 և 9-րդ մասերով սահմանված կանոնները:

4. Փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը մինչև 15-օրյա ժամկետում որոշում է ընդունում հանքը փակելու վերաբերյալ, որը ներառում է հանքի փակման պայմաններ, փորձաքննության եզրակացության պահանջներ և դրանց իրականացման հավասիտության ապահովման պայմանները: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

5. Փորձաքննական բացասական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հանքի փակման ծրագիրը վերադարձնում է ընդերքօգտագործողին: Ընդերքօգտագործողը ծանուցումը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում լիազոր մարմին է ներկայացնում հանքի փակման նոր ծրագիր՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 29. Օրենսգրքի 59-րդ հոդվածում

1. 1-ին մասի 1-ին կետում «ուսումնասիրության» բառից հետո լրացնել «հանքավայրի պաշարների վերագնահատման» բառերով.

2. 3-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «իրականացնել հանքի փակման ծրագիրը՝ ապահովելով նաև հանքը փակելու վերաբերյալ լիազոր մարմնի որոշման պայմանները, փորձաքննության եզրակացության պահանջներ և դրանց իրականացման հավասիտության ապահովման պայմանները.».

3. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24-31-րդ կետերով.

«24) սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման իրավունքի դեպքում՝ արդյունահանման հետևանքով գետի հունի փոփոխությունը, հետևաբար նաև անդրսահմանային ազդեցությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս տոպոհանութային աշխատանքների կատարման միջոցով իրականացնել գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ:

25) Սույն հոդվածի 3-րդ մասի 24-րդ կետի պահանջով իրականացվող մշտադիտարկումների արդյունքում գետի հունի վիճակի և կայունության փոփոխություններ (այդ թվում՝ ոչ իր գործունեության հետևանքով) հայտնաբերելու դեպքում անհապաղ դադարեցնել հանքավայրի շահագործման աշխատանքները և մշտադիտարկումների արդյունքները երկօրյա ժամկետում ներկայացնել ընդերքօգտագործման բնագավառի լիազոր մարմնին, արտակարգ իրավիճակների բնագավառի լիազոր մարմնին, շրջակա միջավայրի պահպանության բնագավառի լիազոր մարմնին և բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին:

26) Սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետառողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանումն իրականացնել միայն օրվա լուսավոր ժամերին:»:

27) իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին զուգընթաց հանքավայրի լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքներ,

28) առնվազն 10 տարի պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի և քանակի և այլ հատկությունների որոշման նպատակով վերցված բոլոր փորձանմուշները,

29) օգտակար հանածոյի արդյունահանման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում օգտակար հանածոյի որակի, իսկ լրահետախուզման կամ խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի, քանակի և այլ հատկությունների տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով վերցված փորձանմուշները հսկողական անալիզի ենթարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում,

30) օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների մարման հաշվարկն իրականացնել ընդերքաբանական փորձաքննության ներկայացված և լիազոր մարմնի կողմից հաստատված հաշվետվության մեջ ամրագրված հաշվարկման մեթոդին համապատասխան,

31) լեռնահատկացման սահմաններում չշահագործվող բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների մուտքերը առնվազն մեկ մետր հաստությամբ բետոնապատել:».

4. 4-րդ մասի «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով.

Հոդված 30. Օրենսգրքի 69 հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետրյալ խմբագրությամբ.

«1. Ընդերքօգտագործողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ: Ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարվող գումարների մեջ չեն ներառվում ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի ռեկուլտիվացիոն գումարները: Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը:».

2. 3-րդ մասի 1-3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող՝ նախագծով կամ ծրագրերով ստանձնած ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով.

2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով կամ ծրագրերով ստանձնած, բայց իր կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով.

3) տվյալ ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով փաստացի խախտված հողերի վերականգնման նպատակով».

3. լրացնել հետևյալ բովանդակությանբ 3.1-րդ մասով.

«3.1. Եթե օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացրած ընդերքօգտագործողը ցանկանում է ուսումնասիրության տեղամասում կամ դրա մի մասում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում, ապա արդյունահանման հայցվող տեղամասում երկրաբանական ուսումնասիրության արդյունքում խախտված հողերի վերականգնմանը համարժեք գումարը մնում է

ընդերքօգտագործողի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվեհամարում՝ վերահաշվարկի պայմանով».

4. 4-րդ մասում «Բնապահպանական» բառը փոխարինել «Ռեկուլտիվացիոն» բառով

5. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Ընդերքօգտագործման իրավունքը դադարած տնտեսվարողի կողմից նախագծով կամ ծրագրով կամ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքները կամ շրջակա միջավայրի դրամագլխին կամ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ողջ ծավալով վճարումները չկատարելու դեպքերում՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է դիմել դատարան դատական կարգով չվճարված գումարները բռնագանձելու համար:»:

Հոդված 31. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությանբ 6-րդ կետով.

«6) ընդերքաբանական փորձաքննության ներկայացված օգտակար հանածոների պաշարների գնահատմանը կամ վերագնահատմանը վերաբերվող նյութերում ներառված առաջնային երկրաբանական փաստագրման, դրանք փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատման և արժանահավատության ապահովումը»:

Հոդված 32. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) Կառավարությունը հաստատում է՝

ա. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.

բ. ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.

գ. ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.

2) Լիազոր մարմինը հաստատում է՝

ա. երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում.

բ. օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները և մեթոդական ցուցումները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում.

3. Օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակվում են մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

4. Սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված փոփոխությունները չեն տարածվում այն ընդերքօգտագործողների նկատմամբ, ում ընդերքօգտագործման իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

5. Սույն օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 24-րդ կետը ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

6. Ընդերքօգտագործման իրավունք ունեցողները սույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող 31-րդ կետի կիրարկումն ապահովում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

7. Այն հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց մի մասը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին ծանրաբեռնված են ընդերքօգտագործման իրավունքով, ընդերքօգտագործման նոր իրավունքի տրամադրում կամ տրամադրված տեղամասի ընդլայնում կարող է տեղի ունենալ միայն մնացորդային ամբողջ հաշվեկշռային պաշարներով:

8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում սույն օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով և 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 տոկոսի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 տոկոսի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար:

9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված թույլտվությամբ տրամադրված երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար:

10. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում ոչ ուշ, քան 6 ամիս առաջ երկարաձգման դիմումի ներկայացման ժամկետի պահպանման պահանջը մնում է անփոփոխ այն ընդերքօգտագործողների դեպքում, ում իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում»:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-664-18.06.2020-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին 2011 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-280-Ն օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 2-րդ կետում «գնահատել» բառից հետո լրացնել «կամ վերագնահատել» բառերը:

2. 6-րդ կետում «հայտնաբերման» բառից հետո լրացնել «~~կամ~~ ,հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման» բառերով:

3. 25-**րդ կետում** «միջոցառումներ» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով սահմանված հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջներին համապատասխան »:

4. լրացնել նոր 51-րդ և 52-րդ կետեր.

«51) հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամաս՝ օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում հաշվառված հանքավայրի տարանջատ տեղամաս, որը հաշվառված է առանձին անվանմամբ և սահմանանշերով:

52) գետաողողատային տիպի հանքավայր՝ գետերի ողողատային տարածք, որը պարունակում է գետի վարարումների արդյունքում կուտակված ավազի (ավազակոպճային, ավազակոպճագլաքարային խառնուրդի) վերականգնվող պաշարներ, որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական:»:

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածում՝

1. 6-րդ մասում «կարգով» բառից հետո լրացնել «և ժամկետում» բառը

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-6.10 մասերով.

«6.1. Ընդերքաբանական փորձաքննությունն իրականացվում է լիազոր մարմնի կողմից:

6.2. Օգտակար հանածոների պաշարների գնահատմանը վերաբերող նյութերի ընդերքաբանական փորձաքննությանը լիազոր մարմնի կողմից կարող են ներգրավվել փորձագետներ:

6.3. Եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող սահմանված բովանդակությամբ ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը, ապա լիազոր մարմինը նյութերը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործողին՝ նշելով թերությունները: Ընդերքօգտագործողը ծանուցումը ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում վերացնում է նշված թերությունները: Եթե նշված թերությունները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինը այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

6.4. Եթե ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերը չեն համապատասխանում **օգտակար հանածոների պաշարների և կանխատեսումային պաշարների դասակարգմանը** կամ օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և մեթոդական ցուցումների պահանջներին կամ պաշարների գնահատման հաշվարկներում առկա են բացթողումներ ~~կամ չի հավաստվում ներկայացված տվյալների արժանահավատությունը~~, ապա լիազոր մարմինը դիտարկված բացթողումների վերաբերյալ տեղեկացնում է դիմումատուին՝ նյութերի լրամշակման նպատակով՝ սահմանելով լրամշակման համար հետևյալ ժամկետային սահմանափակումները՝

1) ոչ մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 30 օր,

2) մետաղական հանքավայրերի համար՝ մինչև 120 օր:

Եթե նշված բացթողումները սահմանված ժամկետում չեն վերացվում, ապա լիազոր մարմինը այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

6.5. Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող լրակազմ նյութերը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ~~ժամկետում~~ ընթացում լիազոր մարմինը գրավոր դիմում է բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին՝ առաջնային երկրաբանական փաստագրման նյութերի և փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատման, ինչպես նաև դրանց արժանահավատության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

6.6. Բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը 5 աշխատանքային օրվա ~~ժամկետում~~ ընթացում լիազոր մարմնին տրամադրում է սույն հոդվածի 6.5 մասով նախատեսված և իր տնօրինման տակ գտնվող առկա տեղեկատվությունը: Տեղեկատվության բացակայության դեպքում 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով սկսում է ստուգման գործընթացը և լիազոր մարմնին տեղեկացնում տեղեկատվության տրամադրման ժամկետների վերաբերյալ:

6.7. Եթե բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիազոր մարմնին տրամադրված տեղեկատվության համաձայն ընդերքօգտագործողի կողմից կատարված և հաշվետվությամբ ներկայացված աշխատանքների առաջնային երկրաբանական փաստագրման նյութերը արժանահավատ չեն և չեն համապատասխանում փաստացի իրականացված աշխատանքների հետ, ապա լիազոր մարմինը այդ հիմքով մերժում է դիմումը և 3-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:

6.8. Փորձաքննության գործընթացը կասեցվում է մինչև դիմումատուի կողմից լիազոր մարմին նյութերի լրամշակված տարբերակի ներկայացումը և (կամ) մինչև բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից լիազոր մարմնին տրամադրած տեղեկատվության ստացման օրը:

6.9. Ընդերքաբանական փորձաքննության արդյունքում տրվում է փորձագիտական եզրակացություն, որը հաստատվում է լիազոր մարմնի ղեկավարի համապատասխան որոշմամբ:

6.10. Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանում է լիազոր մարմինը:»:

3. 7- 10-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 9-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասից հանել «մետաղական» բառը:
3. 6-րդ մասում «պարտավորությունից» բառից հետո լրացնել «՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված և ընդերքօգտագործման իրավունքից բխող մյուս բոլոր պարտավորությունները ժամանակին և ամբողջ ծավալով իրականացնելու պարտականությունը» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «տեղեկությունը» բառից հետո ավելացնել «ընդերքօգտագործման իրավունքի ժամկետում» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 25-28-րդ կետերով.

«25) գետաողողատային տիպի հանքավայրերում ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման կարգի սահմանումը.

26) ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի սահմանումը.

27) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցերի հաստատումը.

28) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգի սահմանումը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված հատուկ նշանակության սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման համար հողամասի նպատակային նշանակության փոփոխություն և հողամասի հատկացում չի պահանջվում: Վերականգնվող պաշարների արդյունահանում կարող է իրականացվել միայն սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությամբ:»:

Հոդված 7. Օրենսգրքի 17-րդ հոդվածում՝

2. 1-ին մասը լրացնել նոր 24-րդ և 25-րդ կետերով.

«24) երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջների սահմանումը:

25) օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգների և մեթոդական ցուցումների սահմանումը:»

2. 2-րդ մասի 3-րդ կետում «իրականացումը» բառից հետո լրացնել «փորձաքննական եզրակացությունը հաստատվում է լիազոր մարմնի համապատասխան վարչական ակտով» բառերով:

3. 2-րդ մասում՝

1) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման, հատկացումների չափերի հաշվարկման, վերահաշվարկման, ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացնման, դրամագլխից գումարի վերադարձման վերաբերյալ որոշումների ընդունումը.»,

2) 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14) ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի մշակումը.»,

3) լրացնել հետևյալ բովանդակությանբ 14.1-14.4-րդ կետերով.

«14.1) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցերի մշակումը.

14.2) շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգի մշակումը.

14.3) ընդերքօգտագործման իրավունքի դադարելու դեպքում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի նախատեսված ողջ ծավալով հատկացումներ չկատարելու դեպքերում դատական կարգով հայցադիմումի ներկայացումը.

14.4) ընդերքօգտագործման իրավունքի դադարելու դեպքում օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար ողջ ծավալով հատկացումներ չկատարելու դեպքերում դատական կարգով հայցադիմումի ներկայացումը»:

~~**Հոդված 8.** Օրենսգիրք 21-րդ հոդվածի 5-րդ մասում «ուսումնասիրություն» բառից հետո լրացնել «և հանքավայրի պաշարների վերագնահատման աշխատանքներ» բառերը:~~

Հոդված ~~9~~8. Օրենսգիրք 27-րդ հոդվածի 1-ին մասում՝

1. 1-ին կետում «կարգի» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1.1 կետի» բառերով.
2. 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ 25 տարի ժամկետով, որը կարող է երկարաձգվել համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ 25 տարի ժամկետով: Մինչև 25 տարի ժամկետով թույլտվություն կարող է տրամադրվել կամ տրամադրված թույտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները: »:

3. լրացնել հետևյալ բովանդակությանբ 1.1-րդ և 3-րդ կետերով.

«1.1) օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության՝ հանքավայրի <u>կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի</u> պաշարների վերագնահատման համար մինչև 3 տարի ժամկետով, եթե հանքավայրի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10 և ավելի տարի առաջ և կարող է երկարաձգվել միայն սույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 2.3-րդ մասով սահմանված դեպքում.

3) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների և հանքային ջրերի արդյունահանման նպատակով՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի համաձայն՝ ~~15~~<u>20</u> ժամկետով տարի, որը կարող է երկարաձգվել՝ համաձայն սույն օրենսգրքի 55-րդ հոդվածով սահմանված կարգի՝ ~~15~~<u>20</u> տարի ժամկետով: Մինչև ~~15~~<u>20</u> տարի ժամկետով թույտվություն կարող է տրամադրվել կամ տրամադրված թույտվության ժամկետը երկարաձգվել միայն այն դեպքում, երբ պահանջվող ժամկետում արդյունահանվում են հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները:»:

Հոդված ~~10~~<u>9</u>. Օրենսգրքի 28-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «առարկա» բառից հետո լրացնել «եթե դրանով ապահովվում են նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրից բխող պարտավորությունները, եթե այդպիսի նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրի շրջանակներում փոխատուի (վարկատուի) կողմից դրամը (միջոցները) հանձնվում են ընդերքօգտագործող փոխառուի (վարկառուի) սեփականությանը ընդերքօգտագործման թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով նախատեսված աշխատանքների և դրանցով ստանձնած պարտավորությունների կատարման համար օգտագործելու նպատակով» բառերը:

2. լրացնել հետևյալ բովանդակությանբ 1.1-1.3-րդ մասերով.

«1.1. Ընդերքօգտագործողը լիազոր մարմին է ներկայացնում ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համար համաձայնություն տալու մասին դիմում: Դիմումում և դրան կից ներկայացվում են՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը.

2) իրական սեփականատերերի վերաբերյալ քաղվածքը՝ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի կամ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման նպատակավ երկրաբանական ուսումնասիրության իրավունքի կամ երկաբանական համաձայնության դեպքում.

3) ~~կազմակերպության՝ ժամկետանց~~ հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով ~~չմարված~~ պարտավորությունների ~~չունենալու փաստը հավաստող և պատշաճ վավերացված փաստաթղթերը~~ վերաբերյալ տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.

4) ընդերքօգտագործման իրավունքի գրավի նախնական պայմանագիրը և նպատակային փոխառության (նպատակային վարկային) նախնական պայմանագիրը, որից բխող ընդերքօգտագործողի պարտավորությունների ապահովմանն է ուղղված ընդերքօգտագործման իրավունքի գրավը: Նշված նախնական պայմանագրերի~~ի~~ում ~~նախագծերում~~ պետք է արտացոլված լինեն այն աշխատանքները և պարտավորությունները, որոնց կատարման համար օգտագործելու նպատակով պետք է տրամադրվի նպատակային փոխառությունը (նպատակային վարկը):

1.2. Դիմումին կցվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենով:

1.3. Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որոշում է ընդունում ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համաձայնություն տալու կամ համաձայնություն տալը մերժելու մասին: ~~Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի կողմից որոշում չկայացվելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:~~»:

3. 2-րդ մասի «լիազոր մարմնին գրավոր տեղեկացնելուց» բառերը փոխարինել «լիազոր մարմնի հաձայնությունը ստանալուց» բառերով, իսկ առաջին նախադասությունից հետո լրացնել «~~Համաձայնեցված~~ Սույն հոդված 1-ին մասով սահմանված պայմանագրերում արգելվում է փոփոխություններ ~~իրականացնել~~ կատարել առանց լիազոր մարմնի հետ համաձայնեցման:» նախադասությունը.

4. լրացնել հետևյալ բովանդակությանբ 2.1-րդ մասով.

«2.1 առանց լիազոր մարմնի համաձայնության կնքված կամ փոփոխված ընդերքօգտագործողի և գրավառուի միջև գրավի պայմանագիրը՝ առոչինչ է:».

5. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Լիազոր մարմնի համաձայնության հիման վրա ընդերքօգտագործման իրավունքը սույն հոդվածի 2-րդ մասի համաձայն գրավադրած ընդերքօգտագործողը~~ման իրավունք կրողը~~ պարտավորվում է մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 30-ը լիազոր մարմնին ներկայացնել տարեկան հաշվետվություն, որն իր մեջ պետք է ներառի՝

1) իրավաբանական անձի լրիվ անվանումը, որին պատկանում է ընդերքօգտագործման իրավունքը.

2) մանրամասն տեղեկատվություն հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործման թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով նախատեսված աշխատանքների և դրանցով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ, որոնց կատարման նպատակով ներգրավվել է նպատակային փոխառությունը (նպատակային վարկը) և որից բխող պարտավորությունների ապահովման նպատակով գրավադրվել է ընդերքօգտագործման իրավունքը,

3) սույն հոդվածի 1-ին մասի~~ի~~ով ~~2-րդ կետով~~ ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված և կատարված ծախսերը հավաստող փաստաթղթեր.

4) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող ընդերքօգտագործողների դեպքում՝ հաշվետվությամբ ներկայացված ծախսերն այդ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ համադրող՝ «Աուդիտորական գործունեության մասին» ~~ՀՀ~~ օրենքի իմաստով աուդիտորական կազմակերպություն համարվող ընկերության կողմից պատրաստված հաշվետվություն, որը պետք է հնարավորություն տա նույնականացնել յուրաքանչյուր ծախսային տարրն այն հիմնավորող փաստաթղթի հետ:»

6. Լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Տարեկան հաշվետվությանը կցվող փաստաթղթերը ներկայացվում են բնօրինակով կամ պատշաճ վավերացված պատճենով:

5. Ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համար համաձայնություն տալու մասին դիմումը մերժվում է, եթե՝

3) դիմումատուն՝ ունի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ.

4) սույն հոդվածի 1.1-ին~~րդ~~ մասով նախատեսված պայմանները չբավարարելու դեպքում»:

Հոդված ~~11~~10. Օրենսգրքի 30-րդ հոդվածում՝

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Ընդերքօգտագործման իրավունքի դադարեցման կամ կասեցման վերաբերյալ կայացված վարչական ակտը կարող է բողոքարկվել ~~վարչական դատարան~~ դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետներում: ~~Վարչական ակտի բողոքարկումը չի կասեցնում այդ վարչական ակտի կատարումը~~:»:

2. 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-8-րդ կետերով.

«6) սույն օրենքի 28-րդ հոդվածով սահմանված ընթացակարգով կնքված ընդերքօգտագործման իրավունքի գրավով ապահովված նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրի շրջանակներում ընդերքօգտագործողին հանձնված դրամը ծախսվել է ոչ նպատակային կամ ընդերքօգտագործողը չի ներկայացրել սույն օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տարեկան հաշվետվությունը.

7) սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 25-րդ կետի պահանջով իրականացվող մշտադիտարկումների արդյունքում գետի հունի վիճակի և կայունության փոփոխություններ հայտնաբերելու դեպքում անհապաղ չի դադարեցվել հանքավայրի շահագործման աշխատանքները.

8) բնապահպանության և ընդերքի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից ստուգմամբ արձանագրված իրավախախտման վերացման համար տրված հանձնարարականի չկատարման վերաբերյալ ակտը ուժի մեջ է մտել և ներկայացվել է ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին միջնորդագիր:»:

Հոդված ~~12~~11. Օրենսգրքի 33-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով.
2. 2-րդ մասի 5-րդ կետում «2-րդ մասին» բառերից հետո լրացնել « և լիազոր մարմնի կողմից սահմանված ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին » բառերով:

Հոդված ~~13~~12 . Օրենսգրքի 38-րդ հոդվածում՝

3. 2-րդ մասում «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերը.

4. 2-րդ մասի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը՝ սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասին և լիազոր մարմնի կողմից սահմանված ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան:»:

Հոդված ~~14~~13. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10) ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ընդերքօգտագործման իրավունքը դադարեցված օբյեկտ է և իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է ~~վարչական դատարան~~ դատական կարգով և առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:»:

Հոդված ~~15~~14. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ **բովանդակությամբ** 10-րդ կետով.

«10) ը**նդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխի հատկացումների և դրանց վճարման ժամանակացույցի մասին տվյալները:»:

Հոդված ~~16~~ 15. Օրենսգրքի 42-րդ հոդվածում՝

3. 3-րդ մասում «խախտմամբ» բառից հետո ավելացնել «կամ ընդերքօգտագործողը չի կատարել երկրաբանական ուսումնասիրության ծրագրով՝ թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի պահին նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 ~~%-ը~~ տոկոսը, ինչպես նաև չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման պահի դրությամբ նախատեսված ծավալով հատկացումները» բառերը».

4. 5-րդ մասում՝

1) «նշվեն» բառից հետո լրացնել «և ներկայացվեն թղթային և էլեկտրոնային տարբերակով» բառերը

2) 3-րդ կետից հանել «կամ նախագծով» բառերը:

3. լրացնել հետևյալ բովանդակությանբ 2.2-րդ և 2.3-րդ մասերով.

«2.2 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվությունը տրամադրվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման համար՝ 3 տարի ժամկետով և առանց երկարաձգման հնարավորության՝ բացառությամբ սույն հոդվածի 2.3 մասի, եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարները գնահատվել են երկրաբանական ուսումնասիրության թույլտվության համար հայցվող դիմումին նախորդող օրվանից մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10 և ավելի տարի առաջ:

2.3 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի պաշարների վերագնահատման թույլտվության գործողության ժամկետը օգտակար հանածոյի հանքավայրի պաշարների վերագնահատման հաշվետվության հաստատումից հետո՝ 20 օրվա ընթացքում, ուսումնասիրության թույլտվություն կրողի ներկայացրած դիմումի հիման վրա կարող է երկարաձգվել ևս մեկ տարով՝ արդյունահանման նախագիծը կազմելու համար:»

Հոդված ~~17~~16. Օրենսգրքի 43-րդ հոդվածում՝

4. 1-ին մասում «ծրագիրը» բառից հետո լրացնել «թղթային և էլեկտրոնային տարբերակով» բառերը.

5. լրացնել 4.1 մասով.

«4.1 Լիազոր մարմինը մերժում է ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ ներկայացված դիմումը~~, ընդերքօգտագործողը դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ունի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսված հատկացումների մասով ապառք~~ եթե ընդերքօգտագործողը չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման օրվա դրությամբ նախատեսված հատկացումները:»:

6. 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~18~~17. Օրենսգրքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված ~~19~~18. Օրենսգրքի 45-րդ հոդվածում՝

6. 1-ին մասի «3» թիվը փոխարինել «վեց» բառով.

7. 2-րդ մասում «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով,

8. 3-րդ մասում՝

1) «Դիմումին կցվում են» բառերից հետո լրացնել «նաև» բառը,

2) 2-րդ կետում «ծրագիրը» բառից հետո լրացնել «և կից փաստաթղթերը» բառերը,

9. 5-րդ մասում՝

1) 1-ին կետում «2-րդ մասի 3-րդ կետով» բառերը փոխարինել «2-րդ և 3-րդ մասերով» բառերով.

2) 2-րդ կետում « շահագործվել որպես ողջամիտ և համալիր» բառերը փոխարինել «չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին նախատեսված ողջ ծավալով հատկացումները:**».**

10. 6-րդ մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) եթե հավաստագիրը վերաբերում է երկրաբանական ուսումնասիրության թույլտվության օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 2-4-րդ և 6-7-րդ մասերը և 41-րդ հոդվածը:»:

Հոդված ~~20~~19. Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակության 9-րդ կետով.

«9) պաշարների վերագնահատման հաշվետվությունը ներկայացնել ~~ընդերքօգտագործման իրավունքի~~ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի ավարտից ոչ ուշ քան 9 ամիս առաջ.»:

Հոդված ~~21~~20. Օրենսգրքի 48.1-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «մինչև 30-օրյա » բառերը փոխարինել «մինչև 30 աշխատանքային օրյա» բառերով:

Հոդված ~~22~~21. Օրենսգրքի 49-րդ հոդվածում՝

4. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) կարող է դիմել լիազոր մարմին՝ օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու նպատակով այն հանքավայր~~երի~~ կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի համար, որտեղ դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ նախորդող մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 5, իսկ ոչ մետաղական օգտակար հանածոյի դեպքում՝ 10 տարվա ընթացքում ընդերքաբանական փորձաքննության արդյունքում հաստատվել են օգտակար հանածոյի

պաշարներ: Օգտակար հանածոյի պաշարների հաստատման ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, որի դրությամբ կազմվել է ընդերքաբանական փորձաքննության ներկայացված և հաստատված պաշարների հաշվետվությունը:».

5. 2-րդ մասում՝

1) «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերը.

2) 5-րդ կետում «1-ին մասին» բառերից հետո լրացնել «լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին» բառերով.

6. 2-րդ մասը լրացնել նոր 12-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«12) սահմանային հողերում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման դեպքում սահմանային շերտի հողամասերի կառավարման լիազոր մարմնի համաձայնությունը»:

Հոդված ~~23~~22. Օրենսգրքի 50-րդ հոդվածում՝

3. 1-ին մասը լրացնել նոր 1.1-րդ, 1.2-րդ և 1.3-րդ կետերով.

«1.1) հանքավայրի պաշարների գնահատման համար հիմք հանդիսացած օգտակար հանածոյի արդյունահանման և վերամշակման տեխնիկատնտեսական և տեխնոլոգիական հիմնարար ցուցանիշները և նախագծի համապատասխանությունը այդ ցուցանիշներին.

1.2) պինդ օգտակար հանածոյի դեպքում հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների ներառումը: Եթե հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարները գերազանցում են հանքավայրի տարեկան արտադրողականության 25-ապատիկը (ոչ մետաղականի դեպքում՝ ~~15~~20-ապատիկը), ապա կազմվում և ներկայացվում է հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի գնահատված և հաստատված ողջ հաշվեկշռային պաշարների արդյունահանման ընդհանուր պլանը՝ ըստ 25-ամյա (ոչ մետաղականի դեպքում՝ ~~15~~20-ամյա) արդյունահանման փուլերի՝ մանրամասն կազմելով փորձաքննվող առաջին փուլի նախագիծը ,

1.3) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝

ա. տարեկան մինչև 500~~-0~~ հազար տոննա արտադրողականության պարագայում միայն պինդ պոչանքների առաջացմամբ տեխնոլոգիայի պարտադիր կիրառումը.

բ. ջրի փակ շրջանառու համակարգի պարտադիր կիրառումը,

գ. պոչամբար նախատեսված լինելու դեպքում՝ պոչամբարի տեղադիրքը, քարտեզագրական նյութերը և կառուցման եղանակի հակիրճ նկարագրությունը բացառելով վերընթաց եղանակով պոչամբարի կառուցումը,»:

2. 1-ին մասի 3-րդ կետում «հաշվարկը,» բառից հետո լրացնել «տարեկան առավելագույն արտադրողականությունը:» բառերը:

Հոդված ~~24~~23. Օրենսգրքի 51-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 40-օրյա ժամկետում, լիազոր մարմինը, հանքի փակման ծրագիրը, ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանը և համապատասխան ֆինանսական երաշխիքը, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական երաշխիքները, շրջակա միջավայրի վրա

ազդեցության գնահատման հաշվետվությունը՝ կից փաստաթղթերով ներկայացնում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:»:

4. 11-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ կետով.

«10) ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար դիմումատուն դիմել է, ընդերքօգտագործման իրավունքի դադարեցված օբյեկտ է և տվյալ իրավունքի դադարեցման մասին վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով ~~վարչական դատարան~~ և առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը:»:

Հոդված ~~25~~24. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8) դրույթներ՝ ընդերքն օգտագործելիս կատարվող վճարների հաշվարկման և վճարումների վերաբերյալ, այդ թվում՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման համար մշտադիտարկումների իրականացման հատկացումների վճարումների ժամանակացույցի վերաբերյալ.»:

Հոդված ~~26~~25. Օրենսգրքի 55-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը տրվում է սույն օրենսգրքի 27-րդ հոդվածով սահմանված ժամկետներով:»,

2. 2-րդ մասում «վեց ամիս» բառերը փոխարինել «երկու տարի» բառերով, իսկ «՝ ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ» բառերը հանել.

3. 3-րդ մասում՝

1) «Դիմումում նշվում են՝» բառերը փոխարինել «Դիմումում նշվում և դրան կից ներկայացվում են «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)՝» բառերով.

2) 5-րդ կետում «նախագիծը,» բառից հետո լրացնել «սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի և լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան» բառերով,

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ կետով.

«8) ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանները, հանքի փակման փոփոխված ծրագիրը.»

4. լրացնել հետևյալ բովանադակությամբ 5.2 մասով՝

«5.2. Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետը չի երկարաձգվում, եթե ընդերքօգտագործողը՝

4) ընդերքօգտագործման իրավունքի տրման օրվանից մինչև ժամկետի երկարաձգման դիմումի ներկայացման ժամանակահատվածում չի արդյունահանել թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70~~%-ը~~ տոկոսը.

5) չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման օրվա դրությամբ նախատեսված հատկացումները.

6) չի կատարել դիմումի ներկայացման օրվա դրությամբ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ծավալով հատկացումները»:

Հոդված ~~27~~26. Օրենսգրքի 56-րդ հոդվածում՝

1. 2-րդ մասում՝

1) «ներկայացվում են» բառերից հետո լրացնել « (թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով,

2) 2-րդ կետում «նախագիծը» բառից հետո լրացնել « սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին և լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան» բառերով,

3) լրացնել 5-րդ կետով.

«5) ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման փոփոխված պլանները, հանքի փակման փոփոխված ծրագիրը.».

2. լրացնել հետևյալ բովանդակությանբ 5.1-րդ մասով.

«5.1 Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասը չի կարող ընդլայնվել, եթե՝

1) ընդերքօգտագործման իրավունքի տրման օրվանից մինչև տրամադրված ընդերքի տեղամասի ընդլայնման վերաբերյալ դիմումի ներկայացման ժամանակահատվածում ընդերքօգտագործողը չի արդյունահանել թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 ~~%-ը~~ տոկոսը .

4) չի կատարել **շրջակա միջավայրի պահպանության** դրամագլխին դիմումի ներկայացման օրվա դրությամբ նախատեսված ծավալով հատկացումները.

5) չի կատարել դիմումի ներկայացման օրվա դրությամբ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ծավալով հատկացումները:»:

Հոդված ~~28~~27. Օրենսգրքի 58-րդ հոդվածում՝

10. 1-ին մասում՝ «3» թիվը փոխարինել «9»թվով.

11. 2-րդ մասում՝

1) «ներկայացվում են» բառերից հետո լրացնել «(թղթային և էլեկտրոնային տարբերակով)» բառերով

2) 5-րդ կետում «նշված» բառից առաջ լրացնել «սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 3-րդ կետի «բ.» ենթակետով» բառերը.

12. 3-րդ մասում «հրաժարվելու» բառից հետո լրացնել «դեպքում ընդերքի տեղամասից հրաժարման» բառերով, «կցվում է» բառերը փոխարինել «կցվում են նաև» բառերով, իսկ «նախագիծը» բառից հետո լրացնել «՝ սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին և լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան և 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 9-11-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը» բառերով.

13. լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 մասով.

«3.1 Ընդերքի տեղամասից հրաժարման նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից հետո՝ 20-օրյա ժամկետում, լիազոր մարմինը քննարկում է դիմումին կից ներկայացված հանքի փակման ծրագիրը կամ փոփոխված նախագիծը և ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-7-րդ և 9-րդ մասերով սահմանված կանոնները:».

14. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը մինչև 25-օրյա ժամկետում որոշում է ընդունում հրաժարման նախնական հավաստագիր տրամադրելու վերաբերյալ, որը ներառում է օգտակար հանածոյի

արդյունահանման իրավունքից հրաժարման պայմաններ, փորձաքննության եզրակացության պահանջներ և դրանց իրականացման հավասիտության ապահովման պայմանները: ~~Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:~~».

15. 5-րդ մասի՝

1) «հրաժարման» բառից հետո լրացնել « նախնական » բառը,

2) 1-ին մասում « 2-րդ մասով» բառերը փոխարինել « 2-րդ և 3-րդ մասերով» բառերով,

3) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) Եթե ընդերքօգտագործողը չի կատարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի նախատեսված ողջ հատկացումները.»,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 և 4-րդ կետերով.

«2.1) ընդերքօգտագործողը չի կատարել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ողջ ծավալով հատկացումները.

4) փոփոխված նախագծի կամ հանքի փակման ծրագրի վերաբերյալ տրվել է բացասական փորձագիտական եզրակացություն.»,

ե. 3-րդ կետից հանել երկրորդ նախադասությունը .

16. 6-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. Ընդերքօգտագործողի կողմից սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հրաժարման նախնական հավաստագրով սահմանված պայմանների և պահանջների իրականացումը հավաստող փաստաթղթերը լիազոր մարմնին ներկայացնելուց հետո 15-օրյա ժամկետում լիազոր մարմինը որոշում է կայացնում հրաժարման հավաստագիր տրամադրելու վերաբերյալ և եռօրյա ժամկետում պատշաճ ձևով այդ մասին տեղեկացնում է ընդերքօգտագործողին: Հրաժարման հավաստագիրը ուժի մեջ է մտնում լիազոր մարմնի կողմից որոշում ընդունելու օրվան հաջորդող տասներորդ օրը :»:

17. 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ

«7. Եթե հավաստագիրը վերաբերում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասի մի մասին, ապա սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված որոշման ընդունումից հետո 10-օրյա ժամկետում այդ մասին ծանուցվում է դիմումատուին: Լիազոր մարմնից ծանուցումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, դիմումատուն ներկայանում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի համապատասխան վերաձևակերպումները իր կողմից վավերացնելու համար, որից հետո՝ 10-օրյա ժամկետում, տրվում է ընդերքօգտագործման իրավունքի համապատասխան փոփոխված տարբերակը: Նշված ժամկետում դիմումատուի չներկայանալու դեպքում հրաժարման հավաստագիրը համարվում է ուժը կորցրած:»

18. 8-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«8. Եթե հավաստագիրը վերաբերում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքին ամբողջությամբ, ապա սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված որոշման ընդունումից հետո լիազոր մարմինն ընդունում է նաև իրավունքի դադարեցման մասին որոշում և այդ մասին 10-օրյա ժամկետում ծանուցում դիմումատուին:»:

Հոդված ~~29~~28. Օրենսգիրքը լրացնել 58.1 հոդվածով.

«Հոդված 58.1. Հանքի փակման ծրագրի ներկայացումը

1. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից երկու

տարի առաջ, դիմում է լիազոր մարմին հանքի փակման ծրագիրը օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություններ իրականացնելու համար:

2. Դիմումին կից ներկայացվում են (թղթային և էլեկտրոնային տարբերակով)՝

1) հանքի փակման ծրագիրը, որում ներառվում են՝

ա. ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժումը,

բ. օգտակար հանածոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիրը, ներառյալ՝ հանքի գոյության ընթացքում կատարած ռեկուլտիվացման աշխատանքները,

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիրը, որը ներառում է հանքի փակումից հետո աշխատատեղերի ստեղծման, մասնագիտական վերարտակավորման և ուսուցման դրույթներ,

դ. օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիրը.

2) հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքները.

3) սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «բ.» ենթակետով նշված աշխատանքների կատարումը հավաստող փաստաթղթերը.

4) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ:

3. Հանքի փակման ծրագրի ներկայացված դիմումի նկատմամբ կիրառվում է սույն օրենսգրքի 51-րդ հոդվածի 2-7 և 9-րդ մասերով սահմանված կանոնները:

~~4. Հանքի փակման ծրագրի ներկայացված դիմումը մերժվում, եթե ընդերքօգտագործողը՝~~

~~1) չի կատարել~~ **~~շրջակա միջավայրի պահպանության~~** ~~դրամագլխին նախատեսված ողջ ծավալով հատկացումները.~~

~~2) չի կատարել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ողջ ծավալով հատկացումները~~

~~5~~4. Փորձաքննական դրական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը մինչև 15-օրյա ժամկետում որոշում է ընդունում հանքը փակելու վերաբերյալ, որը ներառում է հանքի փակման պայմաններ, փորձաքննության եզրակացության պահանջներ և դրանց իրականացման հավասիտության ապահովման պայմանները: Եթե սույն մասով սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

~~6~~5. Փորձաքննական բացասական եզրակացությունները ստանալուց հետո լիազոր մարմինը 5-օրյա ժամկետում հանքի փակման ծրագիրը վերադարձնում է ընդերքօգտագործողին: Ընդերքօգտագործողը ծանուցումը ստանալուց հետո 30 օրյա ժամկետում լիազոր մարմին է ներկայացնում հանքի փակման նոր ծրագիր՝ սույն հոդվածով սահմանված կարգով:

Հոդված ~~30~~29. Օրենսգրքի 59-րդ հոդվածում

5. 1-ին մասի 1-ին կետում «ուսումնասիրության» բառից հետո լրացնել «հանքավայրի պաշարների վերագնահատման» բառերով.

6. 3-րդ մասի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «իրականացնել հանքի փակման ծրագիրը՝ ապահովելով նաև հանքը փակելու վերաբերյալ լիազոր մարմնի որոշման պայմանները, փորձաքննության եզրակացության պահանջներ և դրանց իրականացման հավասիտության ապահովման պայմանները.».

7. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 24-31-րդ կետերով.

«24) սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման իրավունքի դեպքում՝ արդյունահանման հետևանքով գետի հունի փոփոխությունը, հետևաբար նաև անդրսահմանային ազդեցությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս տոպոհանութային աշխատանքների կատարման միջոցով իրականացնել գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ:

25) Սույն հոդվածի 3-րդ մասի 24-րդ կետի պահանջով իրականացվող մշտադիտարկումների արդյունքում գետի հունի վիճակի և կայունության փոփոխություններ (այդ թվում՝ ոչ իր գործունեության հետևանքով) հայտնաբերելու դեպքում անհապաղ դադարեցնել հանքավայրի շահագործման աշխատանքները և մշտադիտարկումների արդյունքները երկօրյա ժամկետում ներկայացնել ընդերքօգտագործման բնագավառի լիազոր մարմնին, արտակարգ իրավիճակների բնագավառի լիազոր մարմնին, շրջակա միջավայրի պահպանության բնագավառի լիազոր մարմնին և բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին:

26) Սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանումն իրականացնել միայն օրվա լուսավոր ժամերին:»:

27) իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին զուգընթաց հանքավայրի լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքներ,

28) առնվազն 10 տարի պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի և քանակի և այլ հատկությունների որոշման նպատակով վերցված բոլոր փորձանմուշները,

29) օգտակար հանածոյի արդյունահանման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում օգտակար հանածոյի որակի, իսկ լրահետախուզման կամ խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի, քանակի և այլ հատկությունների տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով վերցված փորձանմուշները հսկողական անալիզի ենթարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում,

30) օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների մարման հաշվարկն իրականացնել ընդերքաբանական փորձաքննության ներկայացված և լիազոր մարմնի կողմից հաստատված հաշվետվության մեջ ամրագրված հաշվարկման մեթոդին համապատասխան,

31) լեռնահատկացման սահմաններում չշահագործվող բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների մուտքերը առնվազն մեկ մետր հաստությամբ բետոնապատել:».

8. 4-րդ մասի «հինգ» բառը փոխարինել «տասը» բառով.

Հոդված ~~31~~30. Օրենսգրքի 69 հոդվածում՝

2. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ընդերքօգտագործողների կողմից սահմանված չափով կատարվող հատկացումների հաշվին ստեղծվում է շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ: Ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարվող գումարների մեջ չեն ներառվում ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի ռեկուլտիվացիոն գումարները: Դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը:».

2. 3-րդ մասի 1-3-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող՝ նախագծով կամ ծրագրերով ստանձնած ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով.

2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով կամ ծրագրերով ստանձնած, բայց իր կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով.

3) տվյալ ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով փաստացի խախտված հողերի վերականգնման նպատակով».

3. լրացնել հետևյալ բովանդակությանբ 3.1-րդ մասով.

«3.1. Եթե օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացրած ընդերքօգտագործողը ցանկանում է ուսումնասիրության տեղամասում կամ դրա մի մասում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում, ապա արդյունահանման հայցվող տեղամասում երկրաբանական ուսումնասիրության արդյունքում խախտված հողերի վերականգնմանը համարժեք գումարը մնում է ընդերքօգտագործողի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի հաշվեհամարում՝ վերահաշվարկի պայմանով».

4. 4-րդ մասում «Բնապահպանական» բառը փոխարինել «Ռեկուլտիվացիոն» բառով

5. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Ընդերքօգտագործման իրավունքը դադարած տնտեսվարողի կողմից նախագծով կամ ծրագրով կամ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքները կամ շրջակա միջավայրի դրամագլխին կամ օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման համար նախատեսված ողջ ծավալով վճարումները չկատարելու դեպքերում՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը կարող է դիմել դատարան դատական կարգով չվճարված գումարները բռնագանձելու համար:»:

~~**Հոդված 31.** Օրենսգրքի 70-րդ հոդվածի վերնագրում, 1-ին և 3-րդ մասերում՝ «բնապահպանական (այդ թվում՝ռեկուլտիվացիոն)» բառերը փոխարինել «ռեկուլտիվացիոն» բառով:~~

Հոդված 31~~2~~. Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությանբ 6-րդ կետով.

«6) ընդերքաբանական փորձաքննության ներկայացված օգտակար հանածոների պաշարների գնահատմանը կամ վերագնահատմանը վերաբերվող նյութերում ներառված առաջնային երկրաբանական փաստագրման, դրանք փաստացի իրականացված աշխատանքների հետ համեմատման և արժանահավատության ապահովումը»:

Հոդված 32~~3~~. 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) Կառավարությունը հաստատում է՝

ա. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.

բ. ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.

գ. ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.

2) Լիազոր մարմինը հաստատում է՝

ա. երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում.

բ. օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները և մեթոդական ցուցումները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում.

3. Օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակվում են մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը:

4. ~~Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը,~~ Սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված փոփոխությունները չեն տարածվում այն ընդերքօգտագործողների նկատմամբ, ում ընդերքօգտագործման իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

5. Սույն օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 24-րդ կետը ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում:

~~45~~ 6. Ընդերքօգտագործման իրավունք ունեցողները սույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող 31-րդ կետի կիրարկումն ապահովում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

~~56~~ 7. Այն հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց մի մասը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին ծանրաբեռնված են ընդերքօգտագորման իրավունքով, ընդերքօգտագործման նոր իրավունքի տրամադրում կամ տրամադրված տեղամասի ընդլայնում կարող է տեղի ունենալ միայն մնացորդային ամբողջ հաշվեկշռային պաշարներով:

~~67~~ 8. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում ~~օրենսգրքի~~ սույն օրենքի ~~55-րդ հոդվածի 5.2-րդ~~ 25-րդ հոդվածի 4-րդ մասով~~ի~~ և ~~56-րդ հոդվածի 5.1-րդ կետերով~~ 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70~~%-ի~~ տոկոսի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման կամ ընդերքի տեղամասի ընդլայնման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 ~~%-ի~~ տոկոսի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար:

9. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված թույլտվությամբ տրամադրված երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում

երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար:

~~78~~10. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում ոչ ուշ, քան 6 ամիս առաջ երկարաձգման դիմումի ներկայացման ժամկետի պահպանման պահանջը մնում է անփոփոխ այն ընդերքօգտագործողների դեպքում, ում իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում»:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-664-18.06.2020-ՏՀ-011/0), «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-664[1]-18.06.2020-ՏՀ-011/0), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-664[2]-18.06.2020-ՏՀ-011/0), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-664[3]-18.06.2020-ՏՀ-011/0) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-664[4]-18.06.2020-ՏՀ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

N	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**2.**	**3.**	**4.**	**5.**	**6.**
	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին», « Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում»				

	փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծեր				
1	ՀՀ կառավարություն	Բոլոր հոդվածներում	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագիծ) 1-ին հոդվածի մասերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին՝ մասերի համարները տեքստից բաժանելով միջակետերով: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի մյուս հոդվածների մասերի համարակալմանը:	Ընդունվել է	Ընդունվել է
	«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ				
2	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծով առաջարկվող 1-ի հոդվածի 2-րդ մասում «կամ հանքավայրի» բառերը փոխարինել «հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսվում է «օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրա-	Ընդունվել է	Ընդունվել է

			բանական ուսումնասիրության թույլտվություն» հասկացության մեջ երկրաբանական ուսումնասիրություններից բացի ներառել նաև հանքավայրի պաշարների վերագնահատումը, ինչի արդյունքում ստացվում է հանքավայրի պաշարների վերագնահատաման համար անձը պետք է ձեռք բերի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանա-կան ուսումնասիրության թույլտվություն, մինչդեռ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի մի շարք հոդվածներով (հոդվածներ 37 և 41) երկրաբանական ուսումնասիրության պայմանագրի և թույլտվության համար պարտադիր պայման է երկրաբանական ուսումնասիրության նպատակի մասին նշումը, իսկ հանքվայրի պաշարների վերագնահատումը երկրաբանական ուսում-նասիրություն կամ տվյալ ուսումնասիրության նպատակ չի հանդիսանում: Այսպես՝ Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «երկրաբանական ուսումնասիրությունը:		
4	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված և ամբողջ տեքստ	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում նշված «հետևյալ բովանդակությամբ» և «կետով» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է

			համապատասխանաբար փոխարինել «նոր» և «կետ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի մյուս հոդվածներում կիրառվող համանման ձևակերպումներին: Նման խմբագրական փոփոխություններն անհրաժեշտ են օրենքներում միատեսակ ձևակերպումների կիրառման համար:		
5	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող 7-րդ հոդվածում լրացվող 6.4 մասից հանել «կամ չի հավաստվում ներկայացված տվյալների արժանահավատությունը» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
6	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) լրացվող 6.4-րդ մասի կետերը նշել արաբական թվանշաններով՝ տեքստից բաժանելով փակագծերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը. «Օրենսդրական ակտի հոդվածները, մասերը և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածում ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների և մասերի	Ընդունվել է	Ընդունվել է

			համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով:		
7	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ և 17-րդ հոդվածներ	Նախագծի 2-րդ հոդվածում «7-րդ հոդվածին» հղում կատարելիս առաջարկում ենք նշել նաև Օրենսգիրքը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասը. «Օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը»: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի 7-րդ հոդվածում «17-րդ հոդվածին» կատարվող հղմանը:	Ընդունվել է Բացի այդ, Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 6.5-րդ և 6.6-րդ կետերում՝ «5-օրյա ժամկետում» բառերը շարադրվել են հետևյալ խմբագրությամբ «5 աշխատանքային օրվա ընթացում»:	Ընդունվել է
8	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ և 22-րդ հոդվածներ	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող 25-րդ կետում կիրառվում է «գետաողողատային տիպի հանքավայր» հասկացությունը, 22-րդ հոդվածով Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր՝ 12-րդ կետում կիրառվում է «ողողատային տիպի հանքավայր» հասկացությունը: Կարծում ենք, նպատակահարմար է Օրենսգրքում նախատեսել այդ հասկացությունների	Ընդունվել է	Ընդունվել է

			սահմանումը:		
9	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Օրենսգրքի 16-րդ հոդվածում լրացվող նոր՝ 2-րդ մասի տեքստում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքին հղում կատարելիս առաջարկում ենք նշել օրենսգրքի կրճատ անվանման ճիշտ տարբերակը:	Ընդունվել է	Ընդունվել է
10	ՀՀ կառավարություն	7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվող Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում «լիազոր մարմնի ղեկավարի համապատասխան որոշմամբ» բառերը փոխարինել «լիազոր մարմնի համապատասխան վարչական ակտով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
11	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ և 9-րդ հոդվածներ	Առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածով, 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «հետևյալ խմբագրությամբ» բառերը փոխարինել «նոր խմբագրությամբ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:	Ընդունվել է	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ,	Առաջարկում ենք նաև Նախագծի 7-րդ	Ընդունվել է	Ընդունվել է

12		16-րդ, 19-րդ, 22-րդ, 26-րդ, 27-րդ, 28-րդ և 30-րդ հոդվածներ	հոդվածի 3-րդ մասի կետերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին, այն է՝ օրենսդրական ակտի կետերը համարակալվում են արաբական թվանշաններով, ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Նույն առաջարկը վերաբերելի է նաև Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, 19-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 22-րդ հոդվածի 2-րդ մասի, 26-րդ հոդվածի 3-րդ մասի, 27-րդ հոդվածի 1-ին մասի և 28-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի կետերի համարակալմանը: Բացի այդ, անհրաժեշտ է Նախագծի 16-րդ, 17-րդ, 26-րդ և 30-րդ հոդվածների մասերը համարակալելիս պահպանել համարների հաջորդականությունը:		
13	ՀՀ կառավարություն	Նախագծի 9-րդ և 16-րդ հոդվածներ	Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.1-րդ կետում, 42-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ և 2.3-րդ մասերում «հանքավայրի» բառից հետո լրացնել «կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
14	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ	10-րդ հոդվածի 5-րդ մաով առաջարկվող	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված	Օրենսգրքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «հաշվետվությամբ» բառից առաջ լրացնել «մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ունեցող ընդերքօգտագործողների դեպքում՝» բառերը:		
15	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառվող «1-ին մասը» թիվը և բառն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով այն, որ 1.1-1.3-րդ մասերը լրացվում են Օրենսգրքի 28-րդ հոդվածում և հոդվածի մասում կարող են լրացվել միայն նոր կետեր:	Ընդունվել է	Ընդունվել է
16	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ	Առաջարկում եք Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 1.1-ին կետում կիրառված «ընդերքօգտագործման իրավունք կրողը» բառերը փոխարինել «ընդերքօգտագործողը» բառով՝ հիմք ընդունելով Նախագծի 10-րդ հոդվածը, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
17	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասով Օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվում է լրացնել նոր նախադասություն՝ «Համաձայնեցված պայմանագրում արգելվում են	Ընդունվել է մասամբ Նախագծի 9-րդ	Ընդունվել է

			փոփոխություններ իրականացնել առանց լիազոր մարմնի հետ համաձայնության»: Հիմք ընդունելով Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները և հասկացությունները՝ առաջարկում ենք «համաձայնեցված» բառը փոխարինել «Ընդերքօգտագործման իրավունքի գրավի» բառերով:	հոդվածի 3-րդ մասում «Համաձայնեցված պայմանագրում» բառերը փոխարինվել են «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանագրերում» բառերով, քանի որ նախագծով նախատեսվում է,որ ընդերքօգտագործման իրավունքը կարող է լինել գրավի առարկա «եթե դրանով ապահովում են նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրից բխող պարտավորությունները»:Հետևաբար,նախագծով սահմանված սույն կարգավորման արդյունավետ	

				կիրառումն ապահովելու համար ընդերքօգտագործողը պարտավոր է ոչ միայն գրավի, այլև նպատակային փոխառության (նպատակային վարկային) պայմանագրերում փոփոխություններ կատարել լիազոր մարմնի համաձայնությամբ: Բացի այդ, նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում «իրականացնել» բառը փոխարինվել է «կատարել» բառով:	
18	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 28-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասում միաժամանակ նշվում է նպատակային փոխառության նախնական պայմանագրի և այդ պայմանագրի նախագծի մասին: Առաջարկում ենք հստակեցնել, թե արդյոք	Ընդունվել է Առաջարկին համապատասխան՝ նախագծի նոր	Ընդունվել է

			ընդերքօգտագործողը պարտավոր է համաձայություն ստանալու դիմումին կցել կնքված նախնական պայմանագիրը, թե՞ բավարար է փոխառության կամ վարկային պայմանագրի նախագծի կցումը: Եթե բավարար է միայն նախագծի կցումը, ապա անհրաժեշտ է զերծ մնալ «նախնական պայմանագիր» եզրույթի կիրառումից՝ տարակերպ մեկնաբանություններից խուսափելու համար:	խմբագրությամբ 9-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 28-րդ հոդվածում լրացվող 1.1-ին մասում նախատեսվել է ընդերքօգտագործողի՝գրավի նախնական պայմանագիրը ներկայացնելու պարտականությունը:	
19	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասով Օրենսգրքի 28-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 3-րդ կետում հղում է կատարվում նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին: Հարկ է նկատել, որ Օրենսգրքի գործող 28-րդ հոդվածի 1-ին մասում ներառված չեն կետեր, 28-րդ հոդվածի 1-ին մասում կետեր չեն նախատեսվում նաև Նախագծով կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում, ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը, առաջարկում ենք հստակեցնել կատարվող հղումը:	Ընդունվել է	Ընդունվել է

20	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված 3-րդ մասի 4-րդ կետում նշված «ՀՀ» հապավումը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը և 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
21	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսվում է Օրենսգրքի 28-րդ հոդվածում լրացնել նոր՝ 5-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման համար համաձայնություն տալու մասին դիմումը մերժվում է, եթե՝ 1) դիմումատուն ունի ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ. 2) սույն հոդվածի 1.1-րդ մասով նախատեսված պայմանները չբավարարելու դեպքում»: Մինչդեռ Նախագծի 10-րդ հոդվածով լրացվող 1.1–ին մասի 3-րդ կետով արդեն իսկ սահմանված է ժամկետանց հարկային և	Ընդունվել է Նախագծի նոր խմբագրությամբ 9-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող Օրենսգրքի 28-րդ հոդվածի 1.1-րդ մասի 3-րդ կետում «կազմակերպության՝ ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր	Ընդունվել է

			Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ չունենալու փաստը և նշված հոդվածի 1.1-ին մասով նախատեսված պայմանները չբավարարելը իր մեջ արդեն իսկ ներառում է ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ ունեալու պահանջը չբավարարելը, ուստի հասկանալի չէ մերժման հիմքերում ժամկետանց հարկային և այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորությունները լրացվող 1.1-ին մասից առանձին կետով սահմանելու անհրաժեշտությունը: Միաժամանակ առաջարկում ենք «1.1-րդ» թիվը փոխարինել «1.1-ին» թվով: Վերոգրյալից բացի՝ կարծում ենք, որ խիստ սահմանափակում է ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված ցանկացած պարտավորության առկայությունը որպես գրավադրման համաձայնություն տալը մերժելու հիմք դիտարկելը: Հնարավոր են դեպքեր, երբ	վճարների գծով չմարված պարտավորություններ չունենալու փաստը հավաստող և պատշաճ վավերացված փաստաթղթերը.» բառերը փոխարինվել են «հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուն նախորդող 5 օրվա դրությամբ.» բառերով: Առաջարկի հիման վրա՝ նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասով լրացվող Օրենսգրքի	

			ընդերքօգտագործողը ներգրավի վարկային միջոցներ, հարստացնի իր ընդերքօգտագործման գործունեությունը և ստացած միջոցներն էլ ուղղի պետության հանդեպ ունեցած պարտավորությունների մարմանը՝ ֆինանսապես առողջանալով: Նման սահմանափակմամբ ընդերքօգագործողի ֆինանսական առողջացման ճանապարհը փակվում է: Առաջարկում ենք սահմանափակումը հանել կամ նախատեսել պարտավորության որոշակի չափ, օրինակ՝ «Սնանկության մասին» օրենքով նախատեսված սնանկության հիմքերին համահունչ կամ մոտ չափ:	28-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը՝ «դիմումատուն ունի ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ .» շարադրվել է հետևյալ խմբագրությամբ «դիմումատուն ունի օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող ժամկետանց հարկային և Հայաստանի Հանրապետության	

				օրենքներով սահմանված այլ պարտադիր վճարների գծով չմարված պարտավորություններ.»:Այսինքն, սահմանվել է ընդերքօգտագործման իրավունքի գրավադրման պիտանի, անհրաժեշտ և չափավոր սահմանափակում՝առ աջարկի հիման վրա սահմանելով պարտավորությունների սահմանաչափ:	
22	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված	Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 28-րդ հոդվածում լրացվող 1.3-րդ կետով նախատեսվում է հետևյալը. «Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի կողմից որոշում չկայացվելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով	Ընդունվել է Ներկայացված առաջարկին համապատասխան՝	Ընդունվել է

			սահմանված կարգով կրում է պատասխանատվություն»: Մինչդեռ, կարծում ենք, նման ձևակերպումը բավարար չափով որոշակի չէ, քանի որ հասկանալի չէ, թե ով է լիազոր մարմնի իրավասու անձը, ով պատասխանատվություն է կրելու սահմանված ժամկետում լիազոր մարմնի կողմից որոշում չկայացվելու համար և ինչ պատասխանատվության մասին է խոսքը:	նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1.3 կետից հանվել է «Սույն մասում նշված ժամկետում լիազոր մարմնի կողմից որոշում չկայացվելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն» նախադասությունը: Բացի այդ, փոփոխություն է կատարվել նաև նախագծի 27-րդ հոդվածի 5-րդ մասում և առաջարկի հիման վրա հանվել է «Եթե սույն մասով սահմանված	

				Ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն»նախադասությունը:	
23	ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդված:	Նախագծի 10-րդ հոդվածով Օրենսգրքի՝ ընդերքօգտագործման իրավունքի գրավին վերաբերող 28-րդ հոդվածում կատարվող լրացումների և փոփոխության արդյունքում նախատեսվում են նոր կարգավորումներ, որոնց արդյունքում ընդերքօգտագործող փոխառուին հանձնվող միջոցները կարող են օգտագործվել միայն ընդերքօգտագործման թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով նախատեսված աշխատանքների և դրանցով ստանձնած	Ընդունվել է ի գիտություն	Ընդունվել է ի գիտություն

			պարտավորությունների կատարման համար: Այսինքն՝ նման կարգավորումները ենթադրում են ընդերքօգտագործողի սեփականության օգտագործման սահմանափակումների նախատեսում: Հետևաբար ցանկացած սահմանափակում պետք է հետապնդի իրավաչափ նպատակ և ապահովի համաչափությունը հետապնդվող նպատակի և կիրառվող սահմանափակման միջոցների միջև: Կիրառվող սահմանափակման միջոցները պետք է անհրաժեշտ և բավարար լինեն հետապնդվող նպատակին հասնելու համար: Միաժամանակ վերոգրյալի համատեքստում հարկ է նկատել, որ սահմանափակումները կիրառվում են իրավահարաբերությունների առանձնահատուկ բնագավառում, այն է՝ ընդերքօգտագործման ոլորտում: Սահմանադրության 10-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է: Ընդերքը հանրային բարիք է և կոչված է ծառայելու հանրությանը: Հաշվի առնելով՝ այս հարաբերությունների ոլորտում հանրային մեծ շահի առկայությունը՝ պետությունը կարող է միջամտել ընդերքօգտագործման ոլորտի		

			իրավահարաբերություններին և նախատեսել իրավաչափ նպատակ հետապնդող սահմանափակումներ: Միաժամանակ հարկ է նկատել, որ այդ սահմանափակումներն արդարացված կլիեն, եթե հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակները հնարավոր չէ իրագործել այլ մեխանիզմների կիրառմամբ: Օրինակ՝ համապատասխան աշխատանքների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումն ապահովող ինստիտուտների միջոցով: Եթե հնարավոր չարաշահումների դեմ ցանկացած այլ մեխանիզմի կիրառումը հնարավոր կամ արդյունավետ չէ, ապա նման սահմանափակումն իրավաչափ է:		
24	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդված	Նախագծի 11-րդ հոդվածով Օրենսգրքի 30-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասում «վարչական դատարան» բառերն առաջարկում ենք փոխարինել «դատական կարգով» բառերով: Դատարանի մասնագիտացումն օրենքով շեշտելու անհրաժեշտություն չկա՝ հաշվի առնելով հնարավոր դատական և դատավարական փոփոխությունները:	Ընդունվել է	Ընդունվել է

25	ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ, 13-րդ և 22-րդ հոդվածներ	Նախագծի 12-րդ հոդվածով Օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում կատարվող լրացման արդյունքում նախատեսվում է, որ երկրաբանական ուսումնասիրության նպատակով թույլտվություն հայցելիս դիմումատուն ներկայացնում է երկրաբանական ուսումնասիրության ծրագիրը՝ Օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասին, լիազոր մարմնի կողմից սահմանված ուսումնասիրության ծրագրին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան: Նախագծի 13-րդ հոդվածով Օրենսգրքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը նոր խմբագրությամբ շարադրելու արդյունքում համանման կարգավորում է նախատեսվում նաև Օրենսգրքի 38-րդ հոդվածում: Նախագծի 22-րդ հոդվածով Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում կատարվող լրացման արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «1. Իրավաբանական անձը (այդ թվում՝ օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը) կարող է դիմել լիազոր մարմին՝ օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ստանալու	Ընդունվել է Առաջարկի հիման վրա նախագծի նոր խմբագրությամբ 32-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող անցումային դրույթներում կատարվել է համապատասխան փոփոխություն՝ տարանջատվել և հստակեցվել են Կառավարության և լիազոր մարմնի պարտականությունները՝ սահմանելով Կառավարության համար նախագծով նախատեսվող նոր իրավասություններին առնչվող փոփոխությունները և	Ընդունվել է

			նպատակով: 2. Դիմումում նշվում կամ դրան կից ներկայացվում են՝ 5) օգտակար հանածոյի արդյունահանման նախագիծը՝ սույն օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասին, լիազոր մարմնի կողմից սահմանված արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջներին համապատասխան.»: Նախագծի 34-րդ հոդվածում որպես անցումային դրույթ նախատեսվում է Կառավարության պարտականությունը հաստատելու երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտական հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները օրենքի ուժի մեջմտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի՝ ընդերքի օգտագործման և պահպանության, ինչպես նաև ընդերքօգտագործման հետ կապված շրջակա միջավայրի պահպանության պետական կառավարմանը վերաբերող 15-րդ հոդվածում	լրացումները:	

			Կառավարության համար նախատեսվող նոր իրավասությանը առնչվող որևէ փոփոխություն կամ լրացում չի նախատեսվում: Առաջակում ենք կատարել համապատասխան լրացումները: Միաժամանակ նկատենք, որ Նախագծում նշվում է, որ լիազոր մարմինն է սահմանում նվազագույն պահանջները, սակայն Նախագծի անցումային դրույթներով դրանք հաստատելու իրավասությունը տրվում է Կառավարությանը:		
26	ՀՀ Կառավարություն	Նախագծի 15-րդ հոդված	Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասովՕրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասում կատարվում է լրացում. «3-րդ մասում «խախտմամբ» բառից հետո ավելացնել «կամ ընդերքօգտագործողը չի կատարել երկրաբանական ուսումնասիրության ծրագրով՝ թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումի պահին նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսը, ինչպես նաև չի կատարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին դիմումի ներկայացման պահի դրությամբ նախատեսված ծավալով հատկացումները» բառերը»: Կատարվող լրացման արդյունքում օգտակար հանածոների	Ընդունվել է	Ընդունվել է

			արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության գործողության ժամկետը չի կարող երկարաձգվել նաև լրացվող դեպքերում: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 33-րդ հոդվածի 7-րդ մասի նմանությամբ անցումային դրույթ նախատեսել նաև երկրաբանական ուսումնասիրության ծրագրով նախատեսված յուրաքանչյուր աշխատանքի առնվազն 70 տոկոսի կատարված լինելու պայմանի վերաբերյալ:		
27	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 16-րդ հոդվածում նշված «%» նշանը փոխարինել «տոկոս» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
28	ՀՀ կառավարություն	Նախագծի 17-րդ, 26-րդ և 27-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 43-րդ հոդվածում լրացվում է նոր՝ 4.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Լիազոր մարմինը մերժում է ընդերքի	Ընդունվել է	Ընդունվել է

			տեղամասի ընդլայնման վերաբերյալ ներկայացված դիմումը, ընդերքօգտագործողը դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ունի շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսված հատկացումների մասով ապառք:» «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Նախագծի այլ հոդվածներում ընդերքօգտագործողի կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսված հատկացումների պարտականության չկատարման վերաբերյալ միտքն արտահայտելիս կիրառվում է այլ ձևակերպում՝ «չի կատարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին (...) նախատեսված հատկացումները» (օրինակ՝ Նախագծի 26-րդ հոդվածի 4-րդ մասով Օրենսգրքի 55-րդ հոդվածում լրացվող նոր՝ 5.2-րդ մասի 2-րդ կետում նախատեսված ձևակերպումը, Նախագծի 27-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 56-րդ հոդվածում լրացվող		

			նոր՝ 5.1-ին մասի 2-րդ կետում նախատեսված ձևակերպումը և այլն): Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք խմբագրել Նախագծի 17-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենսգրքի 43-րդ հոդվածում լրացվող նոր՝ 4.1-ին մասը՝ միաժամանակ առաջակելով «դիմումը» բառից հետո լրացնել «եթե» բառը:		
29	ՀՀ կառավարություն	Նախագծի 19-րդ հոդված	Նախագծի 19-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով Օրենսգրքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում կատարվում է փոփոխություն, որի արդյունքում 45-րդ հոդվածի 2-րդ կետում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «5. Լիազոր մարմինը չի տրամադրում հրաժարման հավաստագիր՝ (...) 2) եթե երկրաբանական ուսումնասիրության իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի մնացած տեղամասը չի կարող ընդերքօգտագործման պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործվել կամ չի կատարել շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին նախատեսված ողջ ծավալով հատկացումները»: Առաջարկում ենք խմբագրել	Ընդունվել է	Ընդունվել է

			քննարկվող կարգավորումը՝ այն հստակեցնելու նպատակով:		
30	ՀՀ Կառավարություն	Նախագծի 19-րդ հոդված	Նախագծի 19-րդ հոդվածով Օրենսգրքի՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձի իրավունքներին և պարտականություններին վերաբերող 46-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվում է նոր՝ 9-րդ կետ, որի արդյունքում Օրենսգրքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «2. Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք ստացած անձը պարտավոր է՝ (…) 9) պաշարների վերագնահատման հաշվետվությունը ներկայացնել ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի ավարտից ոչ ուշ քան 9 ամիս առաջ.»: Առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթներում քննարկվող ժամկետի համար սահմանել իրավական ակտի հիմնական	Ընդունվել է մասամբ Նախագծի 19-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետում «պաշարների վերագնահատման հաշվետվությունը ներկայացնել ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի ավարտից ոչ ուշ քան 9 ամիս առաջ» բառերը շարադրել հետևյալ խմբագրությամբ «պաշարների վերագնահատման հաշվետվությունը	Ընդունվել է

			մասով սահմանված նորմից տարբերվող այլ նորմ՝հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը:	ներկայացնել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքի ժամկետի ավարտից ոչ ուշ քան 9 ամիս առաջ.»:	
31	ՀՀ կառավարություն	Նախագծի 22-րդ հոդված	Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 49-րդ հոդվածի առաջին մասում «հանքավայրերի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի» բառերը փոխարինել «հանքավայրի կամ հանքավայրի աշխարհագրորեն առանձնացված տեղամասի» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
32	ՀՀ կառավարություն	Նախագծի 23-րդ հոդվածով	23-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 50-րդ հոդվածում լրացվող 1.3-րդ կետի «բ.» ենթակետից հանել «տարեկան 500.0 հազար տոննայից ավելի արտադրողականության պարագայում» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
33	ՀՀ կառավարություն	Նախագծի 23-րդ	Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասով Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասում	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված	լրացվող նոր՝ 1.3-րդ կետը նախատեսում է հետևյալ կարգավորումը. «1.3) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման դեպքում՝ ա. տարեկան մինչև 500.0 հազար տոննա արտադրողականության պարագայում միայն պինդ պոչանքների առաջացմամբ տեխնոլոգիայի պարտադիր կիրառումը. բ. տարեկան 500.0 հազար տոննայից ավելի արտադրողականության պարագայում ջրի փակ շրջանառու համակարգի պարտադիր կիրառումը, գ. պոչամբար նախատեսված լինելու դեպքում՝ պոչամբարի տեղադիրքը, քարտեզագրական նյութերը և կառուցման եղանակի հակիրճ նկարագրությունը բացառելով վերընթաց եղանակով պոչամբարի կառուցումը,»: Առաջարկում ենք քննարկվող դրույթի տեքստում 500 հազար տոննա զանգվածը նախատեսելիս կիրառել «500 հազար տոննա» գրելաձևը կամ «500000.0 տոննա» գրելաձևը, եթե «0» թվի կիրառումը նպատակ է հետապնդել ցույց տալու զանգվածում առկա		

			ցենտներ միավորի քանակը:		
34	ՀՀ կառավարություն	Նախագծի 29-րդ հոդված	Նախագծի 29-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքում լրացնել նոր՝ 58.1-ին հոդված, որով նախատեսվում է օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից երկու տարի առաջ լիազոր մարմնին հանքի փակման ծրագիր ներկայացնելու պարտականություն, ընդ որում նախատեսվում են նաև հանքի փակման ծրագրի դիմումը մերժելու դեպքերը: Մինչդեռ Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով որպես ընդերքօգտագործման իրավունքի դադարման հիմք նախատեսված է ընդերքօգտագործման գործողության ժամկետի լրանալը, և քանի որ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը ընդերքօգտագործման ձև է, ուստի հասկանալի չէ, եթե ընդերքօգտագործման գործողության ժամկետի լրանալու հիմքով ընդերքօգտագործման իրավունքը դադարելու է, ուստիև փակվելու է հանքը, օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի ավարտից երկու	Ընդունվել է Առաջարկին համապատասխան՝ նախագծի՝ նոր խմբագրությամբ 28-րդ հոդվածի 5-րդ մասում կատարվել է փոփոխություն և հստակեցվել են ընդերքօգտագործողների հետագա պարտականությունները:	Ընդունվել է

			տարի առաջ հանքի փակման ծրագիրը մերժելը ինչ իրավական հետևանքներ կարող է ունենալ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք հստակեցնել հանքի փակման ծրագիրը մերժելու իրավական հետևանքները՝ նախատեսելով ընդերքօգտագործողի տվյալ իրավական ակտից բխող հետագա պարտականությունները: Բացի այդ, հարկ է նկատել, որ Նախագծի մի շարք հոդվածներով Օրենսգրքով նախատեսված փաստաթղթերի ներկայացմանը վերաբերող կարգավորումներում լրացվում են դրույթներ՝ դրանք թղթային և էլեկտրոնային եղանակներով ներակայացնելու պարտականության վերաբերյալ, սակայն Նախագծի 29-րդ հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր 58.1-ին հոդվածի 2-րդ մասում համանման դրույթը բացակայում է: Կարծում ենք, նպատակահարմար է նման կարգավորում նախատեսել նաև լրացվող նոր՝ 58.1-ին հոդվածում: Միաժամանակ, Նախագծի 29-րդ հեդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 58.1-ին հոդվածի		

			համարն առաջարկում ենք տեքստից բաժանել միջակետով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը. «Հոդվածների և մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով»:		
35	ՀՀ Կառավարություն	Նախագծի 29-րդ հոդված	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես: 2. Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի	Ընդունվել է	Ընդունվել է

			իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը»: *Նախագծի 33-րդ հոդվածի անցումային դրույթներում ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ նախատեսված է Նախագծով կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում նախատեսվող՝ անձի իրավական վիճակը վատթարացնող ոչ բոլոր իրավակարգավորումների համար. «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:* *2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝* *1) Կառավարությունը հաստատում է՝* *ա. շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա*		

			ընթացքում *բ. ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.* *գ. ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում.* *2) Լիազոր մարմինը հաստատում է՝* *ա. երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում.* *բ. օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները և մեթոդական ցուցումները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում.*		

			3. Օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակվում են մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը: *4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, սույն օրենքի 27-րդ հոդվածով սահմանված փոփոխությունները չեն տարածվում այն ընդերքօգտագործողների նկատմամբ, ում ընդերքօգտագործման իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:* *5. Ընդերքօգտագործման իրավունք ունեցողները սույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող 31-րդ կետի կիրարկումն ապահովում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:* *6. Այն հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց մի մասը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին ծանրաբեռնված են ընդերքօգտագործման իրավունքով, ընդերքօգտագործման նոր իրավունքի տրամադրում կամ տրամադրված տեղամասի ընդլայնում կարող է տեղի ունենալ*		

			միայն մնացորդային ամբողջ հաշվեկշռային պաշարներով: *7. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում օրենսգրքի սույն օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասովի և 26-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 տոկոսի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման կամ ընդերքի տեղամասի ընդլայնման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70 տոկոսի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար:* *8. Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում ոչ ուշ, քան 6 ամիս առաջ երկարաձգման դիմումի ներկայացման ժամկետի պահպանման պահանջը մնում է անփոփոխ այն ընդերքօգտագործողների*		

			դեպքում, ում իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում»: *Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ նախատեսել նաև Նախագծի հետևյալ դրույթի համար.* *Նախագծի 29-րդ հոդվածի 3-րդ մասով Հայաստանի Հանրախեստության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 3-րդ մասում լրացվում է նոր՝ 24-րդ կետ, որի համաձայն. « 3. Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստացած անձը պարտավոր է՝* *(…)* *24) սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետառողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի վերականգնվող պաշարների արդյունահանման իրավունքի դեպքում՝ արդյունահանման հետևանքով գետի հունի փոփոխությունը, հետևաբար նաև անդրսահմանային ազդեցությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս տոպոհանութային աշխատանքների*		

			կատարման միջոցով իրականացնել գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ»: *Քննարկվող կարգավորման համար ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ նախատեսելը նաև հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին:*		
36	ՀՀ կառավարություն	Նախագծի 30-րդ հոդված	30-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվող 28 -րդ և 29-րդ կետերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ «28) առնվազն 10 տարի պահպանել օգտակար հանածոյի արդյունահանման, լրահետախուզման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում, ինչպես նաև խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի և քանակի և այլ հատկությունների որոշման նպատակով վերցված բոլոր փորձանմուշները, 29) օգտակար հանածոյի	Ընդունվել է	Ընդունվել է

			արդյունահանման և շահագործական հետախուզման աշխատանքների ընթացքում օգտակար հանածոյի որակի, իսկ լրահետախուզման կամ խտանյութից կամ ձուլվածքից օգտակար հանածոյի որակի, քանակի և այլ հատկությունների տեղեկատվության արժանահավատության գնահատման նպատակով վերցված փորձանմուշները հսկողական անալիզի ենթարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում,»		
37	ՀՀ կառավարություն	Նախագծի 30-րդ հոդված	30-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31-րդ կետով. «31) լեռնահատկացման սահմաններում չշահագործվող բոլոր ստորգետնյա լեռնային փորվածքների մուտքերը առնվազն մեկ մետր հաստությամբ բետոնապատել:»,	Ընդունվել է	Ընդունվել է
38	ՀՀ կառավարություն	Նախագծի 31-րդ հոդված	Նախագծի 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված փոփոխության արդյունքում ստացվում է շրջակա միջավայրի	Ընդունվել է մասամբ	Ընդունվել է

			պահպանության դրամագլխի գումարները բացառապես օգտագործվում են՝ 1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող՝ նախագծով կամ ծրագրերով ստանձնած ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով, 2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով կամ ծրագրերով ստանձնած, բայց իր կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման նպատակով, 3) տվյալ ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով փաստացի խախտված հողերի վերականգնման նպատակով: Նշված ձևակերպումից ստացվում է, որ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները չեն կարող օգտագործվել բնապահպանական կամ բնությանը և շրջակա միջավայրին հասցված վնասների վերականգնման նպատակով, այլ բացառապես ռեկուլտիվացիոն (խախտված հողերի վերականգնմանն ուղղված աշխատանքներ) աշխատանքնրի կատարման նպատակով: Մինչդեռ Օրենսգրքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով, 70-րդ հոդվածի 4-րդ	Առաջարկի հիման վրա նախագծի 30-րդ հոդվածով լրացվող 69-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվել է համապատասխան փոփոխություն և «Բնապահպանական» բառը փոխարինվել է «Ռեկուլտիվացիոն» բառով: Առաջարկը 70-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություն կատարելու մասով չի ընդունվել:	

			մասով շարունակում է նախատեսվել դրամագլխի միջոցների օգտագործումը բնապահպանական կամ բնությանը և շրջակա միջավայրին հասցված վնասների վերականգնման նպատակով:		
39	ՀՀ կառավարություն	31-րդ հոդված	31-րդ հոդվածով առաջարկվող Օրենսգրքի 69 հոդվածում լրացվող 7-րդ մասից հանել «, որոնք մուտքագրվում են կենտրոնական գանձապետարանում բացված՝ ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվին» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
40	ՀՀ կառավարություն	Նախագծի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 33. Անցումային մաս և եզրափակիչ դրույթներ 1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը հաստատում է՝	Ընդունվել է	Ընդունվել է

			1) Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում. 2) Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում. 3) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականաց-ման, այդ թվում նաև կենսաբանական վերա-կանգնման ուղեցույցերը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում. 4)Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում. 5) օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները և մեթոդական ցուցումները սույն օրենքն ուժի		

			մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում. 3. Օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակվում են մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը: 4. Ընդերքօգտագործման իրավունք ունեցողները սույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող 31-րդ կետի կիրարկումն ապահովում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: 5. Այն հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց մի մասը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին ծանրաբեռնված են ընդերքօգտագործման իրավունքով, ընդերքօգտագործման նոր իրավունքի տրամադրում կամ տրամադրված տեղամասի ընդլայնում կարող է տեղի ունենալ միայն մնացորդային ամբողջ հաշվեկշռային պաշարներով: 6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում օրենսգրքի 55-րդ հոդվածի 5.2-րդ և 56-րդ հոդվածի 5.1-		

			րդ կետերով սահմանված թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70%- ի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտա-գործման իրավունքի ժամկետի երկարաձգման կամ ընդերքի տեղամասի ընդլայնման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70%-ի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար: 7. Ընդերքի օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում ոչ ուշ, քան 6 ամիս առաջ երկարաձգման դիմումի ներկայացման ժամկետի պահպանման պահանջը մնում է անփոփոխ այն ընդերքօգտագործողների դեպքում, ում իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում: »:		
41	ՀՀ կառավարություն	Նախագծի 33-րդ հոդված	Նախագծի 33-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 80-րդ հոդվածում, որը վերաբերում է Օրենսգրքի անցումային դրույթներին,	Ընդունվել է մասամբ	Ընդունվել է

			լրացնել նոր՝ 12-րդ և 13-րդ մասեր. «12. Այն հանքավայրերը կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերը, որոնց մի մասը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին ծանրաբեռնված են ընդերքօգտագործման իրավունքով տրամադրվում են տրամադրման ենթակա մնացորդային ամբողջ հաշվեկշռային պաշարներով: 13. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողները, որոնք դիմում են լիազոր մարմին ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման կամ ընդերքի տեղամասի ընդլայնման համար, սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 5.2-րդ եւ 56-րդ հոդվածի 5.1-րդ կետերով սահմանված թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70%-ի պահանջը կիրառվում է 2022 թվականի հունվարի 1-ից մինչև լիազոր մարմնին դիմում ներկայացնելու օրվա կտրվածքով»: Այսպիսով՝ Օրենսգրքի անցումային դրույթներին վերաբերող 80-րդ հոդվածում կատարվում է ոչ հստակ և անորոշ հղում, մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին»	Նախագծի նոր խմբագրությամբ 32-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկի հիման վրա հստակեցվել և փոփոխվել են կատարված հղումները. մասնավորապես, «սույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 5.2-րդ և 56-րդ հոդվածի 5.1-րդ կետերով» բառերը փոխարինվել են «սույն օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով և 26-րդ հոդվածի 2-րդ մասով բառերով»՝ հղում կատարելով նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտին, քանի որ	

			օրենքի 17-րդ հոդվածը նախատեսում է օրենսդրական տեխնիկայի հետևյալ կանոնները՝ «(...) 3. Հղումները կատարվում են միայն հիմնական ակտին կամ հիմնական ակտի մասերին: Նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտին հղումներ կատարվում են միայն այն դեպքում, երբ փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտը, փոփոխություններից կամ լրացումներից բացի, պարունակում է հիմնական իրավական ակտում չպարունակվող այլ նորմեր՝ այդ նորմերի մասով: 4. Հղումները կատարվում են հստակ և ուղղակի: 5. Արգելվում է կատարել՝ 1) անորոշ հղումներ, մասնավորապես միևնույն ակտի այլ մասերին հղումներ կատարելիս չեն կարող առանձին կիրառվել «վերոհիշյալ», «վերոգրյալ», «նախկինում նշված», «նման», «սրանով», «նշված», «սույնում», «սույնով» բառերը. (...)	փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտը, փոփոխություններից կամ լրացումներից բացի, պարունակում է հիմնական իրավական ակտում չպարունակվող այլ նորմեր: Ուստի փոփոխման արդյունքում հղումները կատարվել են այդ նորմերի մասով: Նախագծի 33-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսվող կարգավորումները խմբագրելու առաջարկի մասով նշենք, որ նախագծի 33-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսվող	

			6. Օրենսդրական ակտերի մասերին հղում կատարելիս նշվում են օրենսդրական ակտի կրճատ անվանումը, ակտի հոդվածի հերթական համարը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հոդվածի մասի համարը, հոդվածի մասի կետի կամ ենթակետի համարը:(...)» : Բացի վերոնշյալից հարկ է նկատել, որ Նախագծի 33-րդ հոդվածով Օրենսգրքի անցումային դրույթներում լրացվող կարգավորումները, կարծում ենք հանդիսանում են «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի անցումային դրույթներ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք խմբագրել Նախագծի 33-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսվող կարգավորումները:	կարգավորումները արդեն իսկ խմբագրվել էին Նախագծի 32-րդ հոդվածում:	
42	ՀՀ Կառավարություն	Նախագծի 33-րդ հոդվածի 4-րդ մաս	Հարկ է նկատել նաև, որ Նախագծի 33-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումն ունի հստակեցման կարիք, մասնավորապես՝ հասկանալի չէ մասում «Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը» բառերի կիրառման	Ընդունվել է	Ընդունվել է

			անհրաժեշտությունը:		
43	ՀՀ կառավարություն	34-րդ հոդված	Նախագծի 34-րդ հոդվածով նախատեսվում է կարգավորում, որի համաձայն քննարկվող օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետ է նախատեսվում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես: 2. Նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար	Ընդունվել է մասամբ Նախագծի նոր խմբագրությամբ լրացված 32-րդ հոդվածի 4-րդ մասում նախատեսվել է առանձին դրույթի համար ուժի մեջ մտնելու այլ ժամկետ: Առաջարկը ողջ Նախագծի ուժի մեջ մտնելու համար ավելի ուշ ժամկետ նախատեսելու մասով չի ընդունվել՝հաշվի առնելով նախագծի հրատապությունը: Միաժամանակ նշենք,որ 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված վրիպակը շտկվել է:	

			անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը»: Հիմք ընդունելով վերոգրյալը, կարծում ենք, նպատակահարմար է Նախագծի մի շարք հոդվածներով նախատեսվող կարգավորումների համար նախատեսել ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ: գՆախագծի վերաբերյալ սույն եզրակացության 22-րդ և 23-րդ կետերում առկա առաջարկները պայմանավորված են այն հանգամանքով, որ Ազգային ժողովի պաշտոնական կայքում հրապարակված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-664-18.06.2020-ՏՀ-011/1) տեքստում չի ներառվել Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Սնանկության մասին» Հայաստանի		

			Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի առաջարկների վերաբերյալ ամփոփաթերթի 7-րդ կետով նախատեսված՝ Կառավարության կողմից Նախագծի 33-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու առաջարկը, ըստ որի՝ 33-րդ հոդվածը, ըստ ամփոփաթերթի, շարադրվում է հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 33. Անցումային մաս և եզրափակիչ դրույթներ 1.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:		

			2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Կառավարությունը հաստատում է՝ 1) Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում. 2) Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում. 3) ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի, ընդերաօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում նաև կենսաբանական վերականգնման ուղեցույցերը՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում. 4) Երկրաբանական ուսումնասիրության ծրագրին և օգտակար հանածոների արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում.		

			5) օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները և մեթոդական ցուցումները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում. 3 Օգտակար հանածո արդյունահանող ընդերքօգտագործողների հետ կնքված ընդերքօգտագործման պայմանագրերի հրապարակվում են մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը: 4.Ընդերքօգտագործման իրավունք ունեցողները սույն օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով լրացվող 31-րդ կետի կիրարկումն ապահովում են սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: 5. Այն հանքավայրերի կամ հանքավայրերի աշխարհագրորեն առանձնացված տեղամասերի դեպքում, որոնց մի մասը սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին ծանրաբեռնված են ընդերքօգտագորման իրավունքով, ընդերքօգտագործման նոր իրավունքի տրամադրում կամ տրամադրված տեղամասի ընդլայնում կարող է տեղի ունենալ միայն մնացորդային ամբողջ հաշվեկշռային պաշարներով: 6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը		

			ընդերքօգտագործման իրավունք ունեցող ընդերքօգտագործողների դեպքում օրենսգրքի 55-րդ հոդվածի 5.2-րդ և 56-րդ հոդվածի 5.1-րդ կետերով սահմանված թույլտվությամբ տրամադրված օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70%- ի պահանջը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից լիազոր մարմին ներկայացված ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման կամ ընդերքի տեղամասի ընդլայնման դիմումների նկատմամբ: Այդ դեպքում օգտակար հանածոյի պաշարների առնվազն 70%-ի պահանջը հաշվարկվում է 2021 թվականի հունվարի 1-ից մինչև դիմումը ներկայացնելու օրը ընկած ժամանակահատվածի համար: 7. Ընդերքի օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետի երկարաձգման դեպքում ոչ ուշ, քան 6 ամիս առաջ երկարաձգման դիմումի ներկայացման ժամկետի պահպանման պահանջը մնում է անփոփոխ այն ընդերքօգտագործողների դեպքում, ում իրավունքի ժամկետն ավարտվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում:»		

			Մեջբերված առաջարկի վերաբերյալ հարկ է նկատել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթ կարող է կատարվել միայն այդ նորմատիվ իրավական ակտով նախատեսված այլ նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է նորմատիվ իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա նորմատիվ իրավական ակտի այդ դրույթը գործում է համապատասխան նորմատիվ իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից: Առաջարկների փաթեթում առկա 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի ուժի մեջ մտնելուցհետո Կառավարությունը պարտավորվում է որոշակի ժամկետներում՝ 6 ամսից մինչև 2 տարի ժամանակահատվածում, հաստատել կարգեր, ուղեցույցեր և նախագծերին վերաբերող նվազագույն պահանջներ: Հարկ է նկատել, որ		

			այդ գործընթացի ավարտից հետո միայն Նախագծով սահմանված մի շարք իրավահարաբերությունների կարգավորումներ կարող են լիարժեքորեն գործել, քանի որ դրանց կատարումն ուղղակիորեն կախված է Կառավարության կողմից հաստատվող կարգերից, ուղեցույցներից և նախագծերին վերաբերող նվազագույն պահանջներից: Բացի այդ, Նախագծի բազմաթիվ հոդվածներով նախատեսվում են կարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա դրանց հասցեատերերին՝ օրինակ՝ լիազոր մարմնին, ընդերքօգտագործողին, իրենց վարքագիծը համապատասխանեցնելու նոր սահմանվող պահանջներին: Միաժամանակ՝ անհրաժեշտ է նկատել, որ Կառավարության կողմից ներկայացված առաջարկի արդյունքում խմբագրված 33-րդ հոդվածի անցումային դրույթներում ուժի մեջմտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ նախատեսված է Նախագծով կատարվող լրացումների և փոփոխությունների արդյունքում նախատեսվող՝ անձի իրավական վիճակը վատթարացնող ոչ բոլոր իրավակարգավորումների համար (օրինակ՝		

			Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասով Օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասում «3» թիվը փոխարինվում է «9»թվով, որի արդյունքում Օրենսգրքի 58-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է հետևյալ կարգավորումը՝ «Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող անձը, որը ցանկանում է հրաժարվել ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքից, պետք է դիմի լիազոր մարմին՝ հրաժարումն ուժի մեջ մտնելու՝ իր համար ցանկալի օրվանից առնվազն 39 ամիս առաջ:»), և որ Նախագծով կատարվող փոփոխությունները փոխկապակցված են, քանի որ հաճախ հղում են կատարում միմյանց: Հիմք ընդունելով մեջբերված իրավական նորմերը և կատարված դիտարկումները՝ առաջարկում ենք նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ նախատեսել ողջ Նախագծի համար: Միաժամանակ նշենք, որ Նախագծի 30-րդ հոդվածի 3-րդ մասով 31-րդ կետ չի լրացվում: Առաջարկում ենք շտկել 33-րդ հոդվածի 4-րդ մասում առկա վրիպակը:		

44	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նախագծի 11-րդ հոդված	Նախագծով առաջարկվող Օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի նախադասությունը, այն է՝ «Վարչական ակտի բողոքարկումը չի կասեցնում այդ վարչական ակտի կատարումը: », հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է
45	«Լուսավոր Հայաստան» խմբակցություն	Նախագծի 22-րդ հոդված	Նախագծով առաջարկվեց օրենսգրքի 27 հոդվածում «15 տարի» արտահայտությունը փոխարինել «25 տարի» արտահայտությամբ	Ընդունվել է մասամբ Նախագծի 22-րդ հոդվածով լրացվող Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 1.2-րդ կետում կատարվել է փոփոխություն և «(ոչ մետաղականի դեպքում 15-ամյա)» բառերը փոխարինվել են «(ոչ մետաղականի դեպքում՝ 20-ամյա)» բառերով:	Ընդունվել է
	«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծի				
46	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Առաջարկում ենք «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի	Ընդունվել է	Ընդունվել է

			նախագծի վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը՝ օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:		
47	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Առաջարկում ենք ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում նշված «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով կատարվում է մեկ լրացում և մեկ փոփոխություն: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում	Ընդունվել է	Ընդունվել է

			փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում նշված «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառին: Առաջարկում ենք նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում նշված «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով, քանի որ նշված նախագծի երկու հոդվածներով օրենսգրքում կատարվում են միայն լրացումներ:		
48	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված օրենքի վերնագրի լրիվ անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին՝ նշելով օրենքի ընդունման, այլ ոչ ստորագրման ամսաթիվը և հերթական համարը: Նույն հիմքով առաջնորդվելով՝ առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում	Ընդունվել է	Ընդունվել է

			փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր 1-ին հոդվածում նշել օրենսգրքերի հերթական համարները:		
49	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի 8-րդ պարբերությունում կատարվող լրացման և փոփոխության արդյունքում նախատեսվում է հետևյալ կարգավորումը. «գ) պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝ (...) - պարտապանին լիցենզիա կամ ընդերքօգտագործման իրավունք տրամադրած պետական մարմնին (մարմիններին), եթե դիմումում առկա է տեղեկատվություն լիցենզիա ունենալու մասին.»:	Ընդունվել է	Ընդունվել է

			Կարծում ենք՝ անհրաժեշտ է նաև «Սնանկության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի 8-րդ պարբերությունում նախատեսել, որ դիմումում առկա պետք է լինի ընդերքօգտագործման իրավունք ունենալու մասին տեղեկատվություն:		
50	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում նշված «ավելացնել» բառը փոխարինել «լրացնել» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծեր 1-ին հոդվածում նշված «ավելացնել» բառին:	Ընդունվել է	Ընդունվել է
	Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
51	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «5» թիվը	Ընդունվել է	Ընդունվել է

			փոխարինել «4.1» թվով		
52	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի մասերի համարները տեքստից բաժանել միջակետերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»	Ընդունվել է	Ընդունվել է
53	ՀՀ կառավարություն	2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածը հանել:	Ընդունվել է	Ընդունվել է
	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ				
54	ՀՀ կառավարություն	Հոդված 1	1-ին հոդվածից հանել «և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման արտաբյուջե» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
55	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ	Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված	օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի կրճատ անվանում հիշատակելիս «ընդերքի» բառից առաջ նշել նաև «Հայաստանի Հանրապետության» բառերը, քանի որ դրանք նախատեսված են Օրենսգրքի վերնագրում:		
	««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի նախագիծ				
56	ՀՀ կառավարություն	նախագծի 1-ի հոդված	Առաջարկում ենք ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի նախագծի 1-ի հոդվածում նշված օրենքի ամբողջական անվանումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին՝ հանելով օրենքի վերնագրից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը և նշելով հերթական համարը: Միաժամկանակ առաջարկում ենք ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի նախագծի 1-ի հոդվածում	Ընդունվել է	Ընդունվել է

			նշված «(այսուհետ՝ Օրենք)» բառերը հանել, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքին տվյալ նախագծում այլևս հղում չի կատարվում:		
57	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ի հոդված	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի նախագծի 1-ի հոդվածի «4-րդ հոդվածի 3.1 մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.3 կետով» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «4-րդ հոդվածի 3.1-ին մասումլրացնել նոր՝ 5.3-րդ կետ» ձևակերպումով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը: Նախագծերի փաթեթի վերաբերյալ այլ առաջարկություններ և դիտողություններ չկան:	Ընդունվել է	Ընդունվել է